



ՄԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆՏԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆՔ Յ. ՅԱԿՈԲԵԱՆ
 ՔԱՂԱՔԱԿԱՆ. Կորսոն Զորավար.....
 ԲԱՆԱՍՏԵՂԻԱԿԱՆ. Յ. Սոխան (Լամարթին) Թարգմանութիւն Տ. ՍԵԹԵԱՆ
 ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. Կոռուց Անտոնատ ՇԱՀԷՆ
 ՎԷՊ. Մատենի մեղքը (ԲՕԼ ԱԼՊԱՆ) Թարգմանութիւն.....
 ՔԱՂԱՔԱՆ ՄԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. Արտաքին, Ներքին, Ազգային.....
 ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (Կղարիէ ալ Մօնթէրէն) Թարգմ..... Մ. ԶՈՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆ Ք ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս եւ գաւառներու — տարեկան..... Կէս ոսկի Օսման.
 » » վեցամսեայ..... Քառ » »
 Մէկ երեւին գինն է 60 փարայ
 Օտար քաղաքաց համար տարեկան..... 12 Ֆրանք
 » » վեցամսեայ..... 6 »
 Թղթատարութեան ծախք տարեկան..... Դան արծ. 15
 վեցամսեայ » » 7½

Մասիսի Խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրուածին կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց
 Ղալթիա, Նորատուհնեան Խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1884

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 5 Հոկտեմբեր

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքային)	410 1/3
3 » » » (վճարներ)	409 5/4
3 » Բարիդի » (պանքային)	22 87 1/2
» » » (վճարներ)	22 93

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Քոնսուլատ

Երեկ երեկոյ գոցուեցաւ (Գ. Կ.) ԳՏԻՆ	8 44
Պորային գոցուեցին վերջը »	8 44
Բերայի մէջ »	8 43 1/2
Սաւառուոն բացուեցաւ »	8 4
Բարձրագոյն գին »	8 14
Նուաղագոյն »	8 14
Կէս օրին »	8 14
Իւնիֆիէ Եգիպտական »	66 20
Երեկ իրկուոն գոցուեցաւ »	66 30
Բերայի մէջ »	67 7 1/2
Այս առտու բացուեցաւ »	67
Կէս օրին »	67
Հէվալէսիլ »	42 1/2
Իւրօր գոնսուլատէի »	—
» Իւնիֆիէի »	—
Փոխառութիւն 1863 (Գ. Կ.)Ֆր. ...	62
» 1863 »	51
» 1869 »	45
» 1873 »	40 50
Պոն աւաթ Թրեզոր »	48 25
Բումէլիի երկաթուղի »	41 425
Օպիկասիոն ալ Բրիտիթէ »	—
Բամբէթուղի Լաւրիօմի »	78

ԲԱԺՆԵՏՈՐՍԻ

Սօսիթէ Ժէնէրալ..... Անգլ. Լր.	3 29
Քրէտի Ժէնէրալ (Գ. Կ.) ... Օսմ. Լր.	6 48
Պանք ալ Գոնս..... »	5 30
Սոս. Շանթ Ե վայէօր Օսմ. Լր.	3 28
Թրամուէլ..... »	285

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	դրշ. ... 400
20 Ֆրանքոց	» ... 87 28
Անգլիական ոսկի	» ... 410 8
Բօլ Խմբերիալ	» ... 90 8
Քրիմից	» ... 54 20
Ռուսի թղթադրամ	» ... 8 89
» արծաթ	» ... 89 35
Ֆիօրին	» ... 9 4

Մէճ. արծ. (տարր.)	» ... 107 38
Վ. Եջնոց	» ... 103 8
Հինգնոց	» ... 103 8
Մէթալիք	» ... 98 20
Պղինձ	» ... 800
Թղթադրամ	» ... 3000

ԵՆՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 16 Հոկտեմբեր ժամ 3 վայր. 45 Երեկոյ	
Անգլ. քոնսուլատէ գոցուեցաւ	401 5/16
Օսմ. բացուեցաւ	7 41/4
» գոցուեցաւ	7 5/8
Օսմ. փոխառութիւն 1863	40 1/2
» 1869	9 1/8
» 1871	65 1/2
» 1872	47 1/2
» 1873	8 1/2
Փոխառութիւն 1877	77 1/4
Պանք Օթօման	42 5/8
Ռուսական փոխառ. 73 (Գ. Կ.)	94 3/4
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)	60 7/8
» առանձն. (Բրիտիթէ)	84 7/8
Տայրա Սանիէ	56 5/4
Տօմանիալ (փոխառ. Բօլիւր)	82 1/2
Հոնգարական պարտութիւն 1877	102 1/4
Փոխառութիւն Բարիդի վրայ	—
Վ. Իէննա, 16 Հոկտեմբեր ժամ 4 Երեկոյ	
Փոխառութիւն Լոնտոնի վրայ	422 25
Օսմանեան երկաթուղի	49 70
Բարիդ, 16 Հոկտ. ժամ 3 վայր. 45 Երեկոյ	
Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0.....բաց	408 92 1/2
» 3 0/0.....բաց	77 97 1/2
Օսմանեան քոնսուլատէ բացուեցաւ	7 67 1/2
» գոցու. (Գ. Կ.)	7 70
» 1863	52
» 1869	46
» 1873	41
Օսմանեան երկաթուղի	41 25
» Իէթիի բամբէթուղի	546 25
Պանք Օթօման	562 50
Գրէտի Լիօնէ	542 50
» Ֆիսիէ	4300
Բամբէտոմ Լիօնի (Գոն. Կար.)	4232 50
Սոսէղի Նրանք	4907 50
Ռուսական 5 0/0 1877	99
Իտալական Ռանթ	96 55
Եգիպտական միացեալ գոց	307 50
Սպանիական (արտաքին)	60
Բրիտիթէ Թիւրք	370
5 0/0 Հելլենական	356.25
Չէք Լոնտրայի վրայ	25 21

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33 րդ ՏԱՐԻ

1884 ՀՈԿՏԵՄԲԵՐ 6

ԹԻԻ 3738

ԲԱՆՏԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆՔ

Կերածութիւն. Խնդրոյն կարեւորութիւնը. — Բանտերը նախնի ժամանակաց մէջ. — Հաւաքական կամ Համախմբական գրութիւն. — Օպրնեան կամ Լը-աակացութեան գրութիւն. — Գասակարգութեան գրութիւն. — Փխատէրփեան կամ Փէնայիվանեան և կամ Խցարգել գրութիւն. — Իւլանտական գրութիւն :

Ընթերցողք կը յիշեն անշուշտ, թէ Իտալիոյ արտաքին գործոց նախարար և նըշանաւոր իրաւագէտ Մանչինիի նախաձեռնութեամբ Հռովմայ մէջ Վեհաժողովը պիտի գումարի, յորում՝ այլեւայլ կառավարութեանց կողմանէ զրկուած մասնագէտներ կայացուցիչք (1) պիտի խորհրդակցին պատժական օրինաց մի քանի միջազգային կարեւորութիւն ունեցող տրամադրութեանց և բանտերու գրութեան բարեփոխման վրայ :

Ժողովոյ որոշումներէն՝ որք անշուշտ ինչ ինչ բարեփոխումներ պիտի պարունակեն առաջարկեալ խնդրոց վերաբերեալ, պիտի օգտուին կառավարութիւնք, մտցնելով զայնս իրենց օրէնսդրութեան կամ հաստատութեանց մէջ :

Նմանօրինակ Վեհաժողովներ յաճախ գումարուած են և կը գումարուին այլեւայլ գիտական խնդրոց համար, և բանաւային գրութեան համար յատկապէս գումարելի այս ժողովն շարունակութիւն մ'է արդէն Ֆրանքֆուրդի (1846 Սեպտեմբեր), Պրիւսէի

(1847 Սեպտեմբեր) և Լոնտոնի (1872 Յուլիս 5) Վեհաժողովոց :

Եթէ Ֆրանքֆուրդի և Պրիւսէի ժողովներն արդիւնաւոր եղան իրենց որոշումներովն (բէզլէ-սիժն), որք բանաւային գրութեան ընդհանուր սկզբանց, անոնց կիրառութեան և բանտերու պաշտօնէից կը վերաբերէին, և որոնք ընդունուեցան և գործադրուեցան զանազան երկիրներու մէջ, ընդհակառակն՝ Լոնտոնի Վեհաժողովը՝ որ Ամերիկեան կառավարութեան հրաւիրանօք գումարեցաւ, որոշ արդիւնք մը չունեցաւ :

Եւ յիշաւի, վիճաբանութեանց համար միմայն Անգլիական լեզուի գործածութիւնն ու նախապատրաստական կարեւոր և լուրջ աշխատութեանց բացակայութիւնն, ինչպէս նաեւ ստանական վայրկեան միայն խօսելու միջոցն՝ որ տրուած էր իւրաքանչիւր ատենախօսի, ուրիշ հետեւանք չէին կրնար ունենալ :

Չարմանալի չէ ուրեմն, երբ այն Վեհաժողովոյ գործադիր մասնախումբը հետեւեալ կերպով կ'անհիտիէ ժողովոյն աշխատութիւնները. « Աշխատութիւն, դատաւարութիւն, կրօնք, ահա՛ այն երեք գործութիւններն, որոնց կրնան մտաւոր « բանտերու տեսչութիւնք (ապֆինկս-բրաւիժն) » :

Սպասելով ուրեմն, որ այս անգամ գումարելի ժողովն աւելի արդիւնաւոր ըլլայ, և մաղթելով որ նորանոր դէպքեր չը յետաձգեն գումարումն (1), մենք կը ջանամք

(1) Տեղական լրագիրք ծանուցին արդէն թէ Լայպսեհական կառավարութիւնը ընդունելով Մանչինիի հրաւերն, ինքն եւս նշանակած է իւր ներկայացուցիչն յայդմ Վեհաժողով :

(1) Բ. Գումն հասած պաշտօնական գրութիւն մը ծանուցած է թէ՛ ժողովոյ գումարումն ժամանակը պիտի որոշուի ապագային, այժմէն անկարելի ըլլալով այդ, Իտալիոյ մէջ տեղող համաժողովի հիւանդութեան պատճառաւ :

ներկայ յօդուածով ամփոփ դադարաւ մը տալ մեր ընթերցողաց, առաջարկեալ խնդրոյն, այն է՝ բանտային դրութեան վրայ մասնաւորապէս այն պատճառաւ՝ որ Վայսերական կառավարութիւնն ալ իւր ուշադրութիւնը դարձուցած է տեղական բանտերու բարենորոգման վրայ, ինչպէս նախաբարական վերջին հրամանագիրքը և տնօրինութիւնք կը վկայեն:

* * *

Բանտային դրութեանց խնդիրն կ'արժէ որ Վեհաժողովոց խորհրդակցութեանց առարկայ ըլլայ: Վասն զի, եթէ ոճրագործաց ու յանցապարտից թուոյն յաւելումը չը կրնայ վերադրուիլ գլխաւորաբար բանտերու վիճակին, սակայն և այնպէս բանտերու յոռի դրութիւն մը այս յաւելման դժուար պատճառներէն մին է: Բացատրելով:

Օրինօք հաստատեալ պատիժ մը՝ միմիայն գործուած յանցանաց փոխարէն՝ ընկերութեան կողմէն սահմանուած չարիք մ'է: Նոյն ընկերութեան վերաբերեալ ո՛ր է անհայտ ոճիր մը կամ յանցանք մը գործելէ առաջ առիթ ունի ապագային մէջ կրելիք պատիժն եւս ի հաշիւ առնու: Ուրեմն՝ ի՛նչ համեմատութեամբ կամ ի՛նչ նպատակաւ ալ որոշուած կամ տնօրինուած ըլլայ պատիժն (1), սա յայտնի է որ, պատժոյն խտտութիւնը կամ մեղմութիւնն, անոր ազդած առաւել կամ նուազ սարսափն ոճրագործութեան հակամէտ անձի մը կամ դատաւարտելոյ մը վրայ, կարեւոր պարագայներ են, որք առաջին անգամ գործուած կամ կրկնուած ոճիրներու թուոյն ու տեսակին նկատմամբ մեծ նշանակութիւն ունին:

Պատժական յոռի դրութիւն մը կրնայ ուրեմն ոճիրներու կամ յանցանաց թիւն երկու կերպով բազմապատկել:

Ա. Մասամբ նուազեցնելով պատժոյն ըստ ինքեան ազգած սարսափն, և այսպէս՝ առաջին անգամ գործուած ոճիրներու կամ յանցանաց թիւն կ'աւելնայ:

Բ. Չուղղելով կամ բոլորովին ապականե-

լով արդէն դատաւարտեալներն, և այսպէս կրկնուած ոճիրներն դիւրաւ չեն արդիւրէի:

Այս վերջին տողերու ճշմարտութիւնը լիովին ապացուցուած է գլխաւորաբար բանտային դրութեանց նկատմամբ, յորմէ հետէ բանտարկութիւնն իւր աւելի կամ քիչ տեւողութեամբն՝ պատժական դրութեան մէջ ամենէն գործածական պատիժն եղած է:

Եւրոպական և Ամերիկեան քաղաքակրթեալ ազգերն վերահասու լինելով այս ճշմարտութեան, ձեռնարկած են իբր մէկ դարէ ի վեր՝ խնդրոյն ուսումնասիրութեան, և այս նպատակաւ կատարուած անհատական կամ պաշտօնական մասնաւոր ճանապարհորդութիւնք և հետազոտութիւնք բանտային նոր դրութեանց ծնունդ տուին:

* * *

Բանտարկութիւնն իբր պատիժ անծանօթ էր նախնեաց, մասնաւորապէս Յունաց և Հռովմայեաց: Բանտը կա՛մ կը ծառայէր բանտարկելոց առժամեայ պահպանութեան ցգործադրութիւն իրենց դէմ տրուած վրձուոյն, զոր օրինակ, գլխատումն, ևայլն, կա՛մ թշնամեաց գերիներն ցմահ փակելու, և կա՛մ մընչեւ իրենց փրկութիւնն՝ ամէն պիտոյքէ զուրկ տանջելու: Ամբաստանեալք եւս երբեմն կ'արդիւրէին բանտերու մէջ:

Այս պատճառաւ հին ժամանակի բանտերն իրենց սահմանեալ նպատակին յարմար սոսկալի տանջարաններ էին, և այսպէս ալ շարունակեցին մնալ, երբ բանտարկութիւնը տակաւ առ տակաւ մասնաւոր պատժոյ հանգամանք ստացաւ:

Այս վերջին փոփոխութիւնը տեղի ունեցաւ եկեղեցական օրինաց (աստիճան) ազդեցութեան ներքեւ, որ բաց ի հերետիկոսութեան պարագայներէ, որոց համար հաւատաքննական դատարաններն ամենէն սոսկալի անգթութիւններն ի գործ կը դնէին, ուրիշ գրեթէ ամէն ոճիրներու և յանցանաց համար բանտարկութիւնը սահմանած էր իբր պատիժ: Յանցապարտն պիտի ապաշխարէր բանտին մէջ իւր գործած յանցանաց համար, որ ըստ եկեղեցական օրինաց Զեղ մ'էր, և զոր Բաւեղ համար ապաշխարել պէտք էր, և բանտերն ալ ապաշխարութեան համար խիստ յարմար վայրեր էին:

(1) Խնդիր մը՝ որ իրաւանց փիլիսոփայութեան մէջ տարբեր տեսականութեանց ծնունդ տուած է:

Մինչեւ անցեալ դարու վերջերն կը տեւէր ամենուրեք բանտերու այս սոսկալի վիճակն, և անդլիական բանտերն կը դերազանցէին միւս ամէն Ներսիսական բանտերն իրենց յուսկութեամբն ու բանտարկելոց վրայ գործուած անդթութեամբն : Անդ բանտերն էին ըստ Մաքսիմի « Ներկային դժոխքներ, « ոճիրներու և հիւանդութեանց մշակարան-ներ, յորս միմայն Սղիւարդներու օրով « հինգ հազար թշուառներ կորան միայն ու « միայն կրօնական պատճառներով » : Նւսակայն առաջին անգամ Անդլիացիք ու Անդլիական Գաղթականութիւնը յԱմերիկա՝ յղացան բանտերու բարենորոգման գաղափարն :

Մասնաւորապէս կը յիշատակեմք Ճօն Հոուարտ (1726-1790) որ իւր կեանքն նուիրեց գործին յաջողութեան, (1) գրեթէ աշխարհի բոլոր գլխաւոր բանտերն այցելելով և իւր քաղած տեղեկութիւններն ներկայելով այն ազգաց ուշադրութեան, որք կը հպարտանային իրենց լուսաւորութեան ու բարոյականին վրայ :

*
* *

Անցնիք ուրեմն բանտերու հին գրութեան նկարագրութեան, և այն հիմնական ու կարեւոր փոփոխութեանց՝ որոց ենթարկուեցան հին բանտերն :

Ըստ այդ հին գրութեան, զոր կարելի է յորջորջել հասարական կամ համայնքական դրոշմին, բանտարկեալք կը բնակէին ի միասին ցերեկ ատեն միեւնոյն սրահի մէջ, որ նաև իրենց աշխատանոցն էր, կը ճաշէին միեւնոյն սեղանատան մէջ, կը զրօնուէին միեւնոյն բացօթեայ ճեմելիքն, և վերջապէս կը քնանային ամենուն համար հասարակ ննջարանին մէջ, վայելելով կատարեալ ազատութիւն հաղորդակցութեան իրենց վիճակակցաց հետ :

Այս ազատ հաղորդակցութիւնը մեծ թերութիւն մ'էր, վասն զի՝ ոճրագործք և յանցապարտք կը գտնեն այսպիսի բանտի մը մէջ իրենց համախոհներ, որոնց ընկերութիւնը մեծապէս կը թեթեւցնէ պատժոյն

նշանակութիւնը, և թերեւս բանտն հաճելի վայր մը կ'ընէ այդպիսեաց համար : Ամօթոյ զգացումը կ'անհետանայ, քանզի փոխանակ յանդիմանութեան կամ մեղադրանաց, կը գտնէ անդ իւր նոր բարեկամաց հաւանութիւնն և սքանչացումն :

Միւս կողմանէ ամենէն նուազ ապահանեալ դատապարտեալն՝ եթէ չուզէր իւր վիճակակցաց ծաղու և հալածանաց ենթարկուիլ, յարմարելով անոնց ընթացքին, այսպիսի յարկի մը ներքեւ՝ բոլորովին վնասաւար կը դառնայ ընկերութեան համար, հըրահանգութեամբ փորձ վարպետներէ :

Ատչտ իրաւամբ կը կոչէ ուրեմն այս տեսակ բանտերն՝ « ճրագործութեան ժողովրդային վարժարաններ » :

Հութվալբըր կը պատմէ թէ՛ երիտասարդ մը այսպիսի բանտի մը մէջ մի քիչ ժամանակ կենալէն յետոյ ո'չ թէ միայն մի քանի մարդասպանութիւններ խոստովաներ է, զորս ինք բնաւ չէր գործած, այլ նաեւ իւր բանտապահն սպաններ է, միմայն ցոյց տալով հաճար իւր ընկերաց թէ՛ ինքն եւս նշանաւոր անխառնութեան մ'է :

Ոչ բարոյականի դասեր, ո'չ կրօնական հրահանգութիւններ չեն զօրեր յուզութիւն ածելու այսպիսի կացութեան մէջ գտնուող բանտարկեալ մը :

Երբ այս ամէն չարիք բանտարկելոց համախոհութեամբ կենակցութենէն և ազատ հաղորդակցութենէն կը ծնին, հարկ կ'ըլլայ բնականաբար այսպիսի ապականիչ հաղորդակցութիւն մը արդելու : Նւսահա՛ այս նպատակաւ յերեւան եկան երկու տարբեր գրութիւնք, որոց մին՝ Օպրինտն և միւսն՝ Փիլապէլ ֆեան (1) անուամբ ծանօթ են : Այս երկու գրութիւնք՝ նպատակ ունենալով միանգամայն դատապարտելոց զգաստացումն, կը կոչուին նաեւ զգաստական դրոշմին (սիսթէմ ֆէնիլիսթիք) և բանտն՝ զգաստարան (ֆէնիլիսթիք), մէզմէ տը բէնիթմանս, բէնիթէնշիքի ֆաուզ :

*
* *

Թէպէտ այս նպատակին հասնելու ամենապարզ միջոցն էր՝ առանձնացումն բան-

(1) Սա մեռաւ ի ֆերսոն, այս նպատակաւ ըրած մէկ ուղեւորութեան մէջ :

(1) Բանտերուն գտնուած տեղերուն անուններէն առնուած :

տարկելոյ՝ մասնաւոր խնայեցու մէջ, սակայն շահագիտական կամ տնտեսական միջանկի նկատումներով⁽¹⁾ խորհուրդաւ բանտարկեալներն միմիայն գիշերներն առանձնացնել մասնաւոր ննջարաններու մէջ, իսկ ցերեկ ատեն համախմբել զանոնք, ինչպէս յառաջագոյն, հասարակ աշխատարանի, ճաշատան եւ աղօթատեղւոյ մէջ, արգիլելով սակայն բերանացի կամ նշանացի ո՛ր եւ է հաղորդակցութիւնն :

Այս դրութեամբ առաջին բանտն հաստատուեցաւ յՕպլըն, Ամերիկայի Նիւ-Եօրք պետութեան մէջ (1819-25), և այս պատճառաւ դրութիւնն ալ կոչուեցաւ Օպլընեան դրութիւնն : Օպլընի հետեւեցան Միլլըանք յԱնգլիա (1813-22) և Ժընէվ (1822-23), Լօզան (1822-29) և Պէրն (1830) ի Զուիցերիա :

Իսոյց այս դրութեան անյարմարութիւնն եւս զգալի եղաւ, երբ փորձով հաստատուեցաւ թէ՛ մինչև իսկ ամենէն խիստ հսկողութիւնն անդամ անկարող էր բանտալ կելոց հաղորդակցութեան բնազդուն չէզոքացնել, ո՛րքան ալ բազմապատկուած ըլլայ հսկող պաշտօնէից թիւն : - Այս պարագայն ընդունած են նաեւ երեւելի մասնագէտք, ինչպէս են Տիւլլարթէլ, Տիւքքէսիօ⁽²⁾ :

Լուութեան պահպանութեան համար բանտարկելոյ տրուած ամենէն անդուծ պատիժներն իսկ, ինչպէս են խարազանի հարուածք, հաղէ և ջուրէ գրկում եւն. չեն զօրած այդ բերանացի կամ նշանացի հաղորդակցութիւններն արգիլելու : Նոյն իսկ Օպլընի մէջ՝ խարազանի հարուածներն աւելի վրէժխնդրութեան ու դառնութեան զգացումներ գրգռած են ի բանտարկեալս քան պահանջուած արգիւնքն յառաջ բերած : Այս անբնական պահանջմանց հետեւանքն եղած են թոքախտի և անձնասպանութեան յաճախակի գէպեր :

Մի քանի թուանշաններ աւելի բացայայտ կերպով կը լուսաբանեն խնդիրն : Այսպէս : Որպէս զի բանտարկեալք հպատակին

Օպլընեան դրութեան այդ հիմնական տրամադրութեան, հարկ եղած էր 1838ին՝ Փօլտպաթ-Ֆիլտի մէջ ի Լոնտոն, ուր 900էն մինչեւ 1,000 բանտարկեալք կը գտնուէին, 18,949 այսպիսի կարգապահական պատիժներ ի գործ դնել, զլիսաւորաբար լուութիւնն յաղում ըլլալուն համար, Այս թիւը բարձրացաւ 1840ին՝ 20,972ի, որուն 16,728 հաղէ ու ջուրէ գրկում, և վերջապէս՝ 1841ին բարձրացած էր 18,074ի :

Նոյնպէս Գաղղիոյ մէջ, ըստ վկայութեան Ալէքսիս տը Թօքվիլի, 1842 թուականին միայն 1,200 բանտարկեալ պարունակող բանտի մը մէջ իբր 10,000 կարգապահական պատիժ տրուած են մի և նոյն պատճառաւ : Ուրիշ բանտի մը մէջ եւս, ուր միայն 500 բանտարկեալք կային, սոյն օրինակ պատժոց թիւն կը բարձրանար 6,000ի :

Ամերիկայի միացեալ պետութիւններէն Լուիզիանայի Օրէնսդիրն՝ Լիվինկսթոն, որ բանտերու օրինադիրք մ'ալ խմբագրած է, իրաւամբ կը գոչէ. « Ինչպէս կարելի է յանձնարարել հրահանգ մը, որոյ գործադրում « թեան համար այսպիսի միջոցներու հարկ « կ'ըլլայ դիմել » :

Ասկէց զատ մասնաւոր քննութիւն մը ցոյց տուած է թէ՛ հակառակ այս ամէն արգելանաց, բանտարկեալք իրարու անուան, ծննդեան տեղւոյն, յանցանաց տեսակին, պատժոյ տեսողութեան, անցելոյն պատմութեան և յապաղային մտադրած ծրագրոյն կատարելապէս տեղեակ էին : Զայս կը հաստատէ նաեւ Ատէնտ՝ Անգլիոյ համար :

Գալով վերջապէս Օպլընեան դրութեան դատապարտելոց վրայ ըրած ազդեցութեան, ըսեմք միայն թէ՛ կրկնուած ոճիրներուն թիւն միեւնոյն է, բաղդատմամբ հին դրութեան հետ. զորօրինակ Գաղղիոյ մէջ 66% — 73%, Վիւրթէմպերկի մէջ 80% : Այս երեւոյթը դիւրաւ կարելի է բացատրել այդ երկու դրութեանց բաղդատմամբ : Կանխեմք յայտնել թէ՛ միակ առաւելութիւնն՝ զոր ունի Օպլընեան դրութիւն, է առանցնացումն բանտարկելոց մասնաւոր խոցեբան մէջ գէշ գէշք տարէն, որով վերջ կը դնեն զայլիւ անբարոյականութիւնք, և սոսկալի հիւանդութիւնք :

Եւ արդարեւ, ինչպէս քիչ մը վերն յիշեցինք, երբ հին (համաթիւն) դրութեան

(1) Բանտարկելոց արհեստագործութիւնք՝ հաստատուելէ կարեւոր արդիւր մ'էին բանտերու տեսողութեանց, և կը կարծուի թէ աշխատողաց համախմբումը այդ հաստատուելէ արգիւնաւորութեան նպատակաւ բազայ մ'էր :

(2) Ընդհանուր վերատեսուէ Պելճիական բանտերու :

ամենամեծ թերութիւնը, այն է՝ բանտարկելոց իրարու հետ հաղորդակցութիւնը, այս նոր դրութեամբ չէ՛ կարելի անհետացնել, մինչեւ խկ հակառակ խիստ պատիժներու, հասկանալի է ուրեմն, որ այդ հաղորդակցութեան վնասակար հետեւանքներն նաեւ Օսլըրնեան դրութեան դէմ առարկութիւններ կրնան ըլլալ:

Նաեւ՝ Օսլըրնեան բանտերու մէջ բանտարկելոց ցերեկեայ համախմբումն կը նըպաստաւորէ չարագործաց բարեկամական նոր կապերու հաստատութեան, այնպէս որ յետ արձակման՝ նոր բարեկամներու գործակցութեամբ մեծապէս կը դիւրանայ իրենց ապագայ մտադրութեանց իրագործումն:

Գալով այն բանտարկելոց՝ որոց բարոյականի զգացումներն դեռ բոլորովին մարած չեն, և տրամադիր են յուզութիւն դալ, կը չարունակեն նաեւ Օսլըրնեան բանտերու մէջ իրենց վիճակացաց ծաղու և յանդիմանութեանց առարկայ ըլլալ, և այսպէս վնասեալ՝ կա՛մ թոքթախի, կա՛մ խելագարութեան կ'ենթարկուին, կա՛մ անձնապաշտութեան կը դիմեն, և կա՛մ որ ամենէն ցաւալին է, բոլորովին ապականուելով կը հետեւին միւս չարագործաց:

* *

Այս վերջին չարիքն անհետացներու համար ոմանք ջանացին մասնաւոր դասակարգութեան մը շնորհիւ՝ նուազ ապականեալ յանցապարտներն պատել միւս աւելի վտանգաւոր ոճրագործներէն: Այսպիսի դասակարգութիւն մը ոմանք կարծեցին հիմնել յանցանաց տեսակներու բաժանման վրայ, զատելով եղբունագործներն (բեքեւել) յանցապարտներէ (բեքեւան): Այլք՝ բանտարկելոց աշխատութեանց տեսակներն ևս ուղեցին ի նկատ առնուլ, և վերջապէս երրորդ կարծիք մ'ալ բանաւոր կը գտնէր բանտարկելոց վարուց ու ջանասիրութեան վրայ հիմնել այսպիսի դասակարգութիւն մը:

Սակայն և այնպէս, ինչպէս կը վրայէ Ալէքսիս տը Թօքվիլ, «Գրեթէ բոլոր Գաղղիական բանտերու վերատեսչաց վիսյու-«թիւնը համաձայն են սա կէտի վրայ թէ՛ «եղբունագործութեամբ դատաւարութեալք

«աւելի պակաս ապականեալ են, քան ա-«ւելի թեթեւ յանցանքով մը դատաւարու-«եալներն»: Ուստի՝ եղբունագործաց ու յանցաւորաց բաժանումն՝ առաջարկեալ դասակարգութեան հիմ չէ կարելի լինիլ:

Միւս կողմանէ, բանտարկելոց վարուց ու բարի տրամադրութեանց վրայ հիմնուած դասակարգութեան դրութիւնն ինքնին կը կորսնցնէ իւր նշանակութիւնը, երբ մտածուի թէ՛ առ այս հարկաւոր է մէն մի բանտարկելոց չարժաններն ու կացութիւնը երկար առեն ուսումնասիրել, և այս խկ ժամանակի կարօտ ըլլալով, անհետացնել ուղեւոր չարիքն կը մնայ միշտ, քանի որ բանտարկեալք՝ դասակարգուելէ յառաջ՝ երկար առեն պիտի ստիպուին ապրիլ միւսնոյն ապականիչ ընկերութեան մէջ:

Արդէն՝ Օպանէլ և Կրըլէ-Վամմի, որք իբր ժէնէվի բանտերուն վերատեսչներն՝ զլիսաւոր աշտպաններն էին սոյն դրութեան, զոր կրնամք կոչել Դասակարգչի Դրո-Քէն, խոստովանած են վերջապէս թէ՛ բանտարկելոց արդար և դործնական դասակարգութիւն մը անկարելի է մանաւանդ ընդարձակ բանտերու մէջ:

* *

Երբ Օսլըրնեան դրութիւնը՝ հին դրութեան թերութիւններն չ'անհետացներ, և բանտարկելոց դասակարգութիւն մը իսկապէս անկարելի կը նկատուի, բնական է որ, ամեն անոնք՝ որք բանտերու աւելի նըպատակայարմար դրութեան մը պէտքն կը զգան՝ ընդունին ուրիշ դրութիւն մը, որ առաջին անգամ ի Զէրրի-Հիլ (Ֆիլատէլֆիա), Բէնսի, Վանիոյ մէջ, ընդունուած ու գործադրուած է (1821-29): Այս դրութիւնը ծանօթ է Փիլադէլֆեան Դրո-Քէն նաեւ Բէնսիլանեան Դրո-Քէն անուամբ (1) և յատկանշին է՝ առանձնացումն բանտարկելոց մասնաւոր խուցերու մէջ թէ՛ դիւեր և թէ ցերեկ առեն:

Այս դրութեան գլխաւոր և ապահովօղումն է՝ յանցապարտներն ազատ պահել

(1) Լաւագոյն է կոչել, «Խցարգել դրութիւն, «սիւթեմ սելիւլէս, սիւթեմ տը Լամբրիզոնման սէրաբէ, սէրաբէ լիթ. քոնֆայնմէնթ»:

ապականութենէ, որ հետեւանքն էր համախումբ կենակցութեան: Յանցապարտն՝ առանձնացած միշտ իւր խուցին մէջ, կ'սկսի իւր դործած անիրաւութեանց վրայ խորհիլ, և զգալ իւր վիճակին ծանրութիւնը: Նա եթէ ունի մի քիչ խիղճ ու ամօթոյ զգացում, ապահովապէս պիտի ձանջնայ զիւր սխալներն, ու զգաստանայ, քանի որ ո՛չ եւս ենթակայ է իւր վիճակացաց ծաղրանաց ու թշնամանաց, և ո՛չ եւս պիտի փորձուի անոնց հրապուրիչ առաջարկութիւններէն:

Ընդհակառակն՝ զօրաւոր պիտի ներգործէ իւր վրայ այցելու բարեկամաց, մարդասիրաց, պաշտօնէից և եկեղեցականաց խմբաւորներն և իւր քով ընթերցման համար թողուած բարոյալից ու կրօնական գրեանց պարունակութիւնն:

Քիչ՝ որ քսան և հինգ երկար տարիներ բանտապետութեան պաշտօն վարած է, կ'ըսէ. « Առանց առանձնացման՝ որ և է կրօնական հրահանգութիւն բանտարկելոյն համար անօգուտ է »: Նոյնը կը հաստատեն նաեւ Օպանէլ և Վէլթէ՝ խրատախօսութեանց նկատմամբ:

Թէ այս դրութիւն ո՛րքան արդիւնաւոր եղած է, կարելի է՝ դատել հետեւեալ թրււանչաներէն: Այսպէս՝ Քիչ կը հաստատէ թէ՛ խցարդել դրութիւնն Բրէսթօնի (Անգղիա) մէջ ընդունուելէն ի վեր 227 բանտարկեալներէն մի միայն երէտ կրկնած են իրենց յանցանքն: Լանքաշայրի մէջ ոճրագործութիւնը ո՛չ թէ քառասուն և հինգ առ հարիւր նուազած են, այլ նաեւ արձակուած բանտարկեալներէն 40 առ հարիւր իսկապէս ուղղուած են:

Ոճրագործ տղայոց յատուկ բանտերէն՝ Բարիլու Լա Ռօքէթի մէջ, ցորչափ այդ բանտ Օպըրնեան դրութեամբ կը կառավարուէր, արձակելոց եօթանասուն առ հարիւրն կրկնած էին իրենց ոճիրներն, իսկ 1840 էն ի վեր երբ այդ բանտն եւս խցարդել դրութեան վերածուեցաւ, այդպիսեաց թիւն եօթն առ հարիւրի իջաւ: Ի Ֆիլատէլֆիա 1829 էն մինչեւ 1847 այս դրութեամբ բացուած բանտերուն մէջ ընդունուած 2500 բանտարկեալներէն 637 ը (28 առ հարիւր) կրկնած էին իրենց ոճիրներն, որոնցմէ միայն չորս առ հարիւրն յառաջագոյն խցարդել դրութեամբ բանտարկուած էին:

Խցարդել դրութեան դէմ ոմանք առարկեցին թէ՛ բանտարկելոց առողջութեանը կը վնասէ նեղ և փոքրիկ օթեկաց մէջ առանձնացումն, ծնունդ տալով մտային և և այլ հիւանդութեանց. բայց այսպիսի առարկութիւն մը կը կորսնցնէ զիւր արժէք, երբ Բարիլու բժշկական Ակադեմիան, ձայնակից ունենալով իրեն Էմիլ Լըբէ և այլոց պէս նշանաւոր հեղինակութիւնը՝ կը մերժէ 1839 թուին այսպիսի կարծիքի մը ճշմարտութիւնն:

Ընդհակառակն՝ հետեւեալ թուանշաններն ցոյց կուտան թէ՛ այս ձեւ բանտերու մէջ մտային հիւանդութեանց դէպքերն ո՛րքան քիչ կը պատահին քան համախումբական դրութեամբ հաստատուած բանտերու մէջ:

Մազասի (Գաղղիա) բանտին մէջ 12452 բանտարկելոց մէջ միայն 32ն այսպիսի դէպք պատահած է: Տէմէց կը պատմէ թէ՛ խցարդել դրութեան ի Լա Ռօքէթ ներմուծուելէն սկսեալ հինգ տարուան մէջ և ու իսկ մէկ դէպք պատահած է խելագարութեան, և միայն մի դէպք անձնասպանութեան:

Ալսաքօի մէջ միայն երէ՛ դէպք կարելի է նշանակել, և այս երեք դէպքերն ալ յառաջիկային ծնունդ տալով իսկ Բանտին մէջ բժշկուած են:

Բրէսթօնի մէջ 1843 էն մինչեւ 1855, և Ժէնէվի մէջ 1840 էն մինչեւ 1846 բնաւ այսպիսի դէպք մը պատահած չէ:

ՅՍմաթէրտամ ութն տարւոյ մէջ 4808 բանտարկեալներէն (խցարդել) և ո՛չ մին այսպիսի հիւանդութեան ենթարկուած է:

Քրիսթիանիա 970 բանտարկեալներէն միայն մէկ խելագարած է:

Վերջապէս՝ Քոթէնհակի մէջ 150 բանտարկեալներէն ո՛չ ոք կայ խելագարած. իսկ Պելճիոյ մէջ 30283 խցարդելոց միայն հինգ խելագարած և վեց անձնասպան եղած են:

Խցարդել դրութեան դէմ յառաջ բերուած առարկութիւն մ'ալ այդ դրութեան մեծածախ ըլլալն է: առարկութիւն մը՝ որ ըստ ինքեան կարեւորութենէ զուրկ է, քանի որ այս դրութեամբ ապահովապէս կ'իրադրործուի բաղձացեալ նպատակն, այն է, զգաստացումն բանտարկելոց, որոյ հետեւանքն է ոճրագործաց թուոյն նուազումն: Այս վերջին պարագայն արդէն խնայել կու-

այ կառավարութեանց մեծամեծ գումարներ, զորս հարկ պիտի ըլլար վառնել խուզարկութեանց և այլ դատական ծախուց և դատապարտելոց պահպանութեան համար, եթէ առանց յիշեալ դրութեան փրկարար ազդեցութեան՝ ոճրագործաց թիւն իւր առջի համեմատութիւնը պահէր: Այսու ամենայնիւ Օպըրնեան բանտերն ալ ոչ նուազ ծախուց կը կարօտին, բանտեր՝ որոց թերութիւններն արդէն բացատրեցինք ըստ բաւականին:

* *

Բայց մասնաւոր խուցերու մէջ բազմաթիւ անընդհատ առանձնացում մը կը բխացնէ բանտարկելոյն միտքն, և դանի կատարելապէս կ'օտարացնէ յապագային ընկերական յարաբերութիւններէ, այնպէս որ բանտարկեալն իւր պատիժն կրելէ յետոյ՝ երբ կը վերստանայ զիւր ազատութիւն, ո՛չ եւս կարող է ընկերութեան մէջ կանոնաւոր կեանք մը վարել: Եւ այս պարագայն իսկ՝ յաճախ կրցած է մղել յազատութիւն վերադարձած զգաստացեալ բանտարկեալն՝ նորանոր չարութեանց:

Թէ՛ խցարդել դրութեան օգուտներն վայելելու և թէ՛ այս աննպաստ հետեւանքներն⁽¹⁾ հեռացնելու նպատակաւ 1854 թվականին Սըր Ուալթըր Բրոֆթըն յաջողեցաւ բարեփոխել խցարդել դրութիւնն և այս բարեփոխեալ դրութիւնը որ գրեթէ ամեն ազգաց կողմանէ մեծ ընդունելութիւն գտած է, կը կոչուի Իւլանտիան Դըրֆֆէն, որովհետեւ առաջին անգամ այդ բարեփոխումը Իւլանտիոյ մէջ ի դործ դրուեցաւ: Ըստ այս դրութեան՝ դատապարտեալն ի սկզբան խցարդել դրութեան կ'ենթարկուի, ճիշդ ինչպէս քիչ մը վերը նկարագրեցինք, բայց այս եղանակ բանտարկութիւնը փոխանակ անընդհատ շարունակելու ցլրումն պատժոյ ժամանակին, կը տեւէ սովորաբար առ նուազն ինն ամիս: Եթէ բանտարկեալն իւր զգաստ վարուք կըցաւ արժանանալ մեղմագոյն վիճակի մը, այն ատեն կը փոխադրուի ուրիշ յարկի մը ներքեւ՝ ուր կը շարունակէ իւր բանտարկու-

թիւնը, համախումբ աշխատակցութեամբ իւր նմաններու:

Այսպէս համախումբ բանտարկեալներէն անոնք՝ որք մինչեւ որոշեալ ժամանակամիջոց շարունակեցին չկորսնցնել իրենց տեսչաց համարումն, կը փոխադրուին մի երրորդ յարկի ներքեւ, Էնթրֆֆէն Բրեյք, ուր իրենց գործ յանձնող անձանց հետ անմիջական յարաբերութեան մէջ կը գտնուին, սովորական հազուստ կը հազնին, և այսպէս՝ կը պատրաստուին ապագայ պարկեշտ կենցաղավարութեան:

Այս վիճակն եւս՝ որոշեալ ժամանակ մը տեւելէ յետոյ, բանտարկեալն առժամանակեայ արձակման կ'արժանանայ, և կը շնորհուի իրեն՝ պատժոյն մնացորդն, պայմանաւոր այնուհետեւ պատուաւոր կեանք մը վարէ: Կ'ըսեմք աշխատ, որովհետեւ հակառակ պարագային մէջ արձակեալն կը գրկուի այս շնորհէն:

* *

Այս տողերով կը վերջացնեմք մեր յօդուածն, խնդրոյն միայն հոգեբանական կողմը ներկայացնելով մեր ընթերցողաց: Իսկ խնդրոյն ճարտարապետական և վարչային կողմերն կ'անցնինք լուծեամբ, որք թէպէտ մասնաւոր յօդուածներու նիւթ կըրնան ըլլալ, բայց շարաթաթերթիս ընթերցողներն այնքան չեն հետաքրքրեցներ:

Յ. ՅԱՆՈՒԲԵԱՆ

ԶՕՐԱՎԱՐ ԿՈՐՏՈՆ

Խարդուով դիւցազնական պաշտպանութիւնն եւս քան զեւս ուշադրութիւն կը հրաւիրէ Կորտոն զօրավարին վրայ: Տարօրինակ մարդ մ'է այս, որ արկածալից կեանք մ'ունեցած է: Իւր բնաւորութեան մէջ ամենէն հետաքրքրաշարժ կողմն է իւր խորին միտքիականութիւնը: Բարի քրիստոնեայ մ'է, որ երբեմն Մովսիսի մը ներշնչումները կ'ունենայ և Սաղմոսերգուին վերացումներն: Արք Սուտան կ'երթար՝ Սուտ Մարդ արէին յառաջ-

⁽¹⁾ Սոյն աննպաստ հետեւանքներէն զերծ չե համախումբաւ, Օպըրնեան և դատապարտութեան դրութիւնը:

խաղացումը կասեցնելու, այս վտանգաւոր ձեռնարկի դժուարութիւններէն աւելի կը խորհէր Խորհրդաշուքին և Պաշտօնին անուամբ շարադրած մէկ գրքին վրայ, զոր կ'ուզէր ի լոյս ընծայել: «Շատ կարեւորութիւն կուտամ այս գրքի, — կը գրէր բաւարեկամի մը. — զի այդ գործ պիտի նպաստէ ազգայնացանելու թէ Աստուած ի մեզ «կը բնակի»: Այս է մեծ գաղտնիքը: (Տե՛ս «Սաղմոս Ին») : Նա շինած է զմեզ՝ տուն մը «ունենալու համար ուր բնակի: Առանց «մեզ, Աստուած բնակարան չունի: Նա «սէտք ունի մեզ, և մեք ալ ո՛րչափ պէտք «ունինք նմա»: »

Զարկ ճօրձ Կորտոն ծնաւ Ուլուիչ 1833ին, զօրականներու ընտանիքէ մը: Զինուորական Ակադեմիոյ մէջ յայտնուեցաւ իւր խնդրիստ, անզուսպ և յեղափոխական բնավորութիւն, որ քանիցս պատճառ եղաւ ուսուցիչներու ազդարարութեանց թէ լաւ սպայ մը չպիտի լինէր, կամ դէշ վախճան պիտի ունենար: Ամրաշէն զօրաց դասը մտաւ 1852ին, և նշանաւոր հանդիսացաւ Խրիմու պատերազմին մէջ: Խրիմէն գրած նամակներ ունի հրատարակուած, յորս պատերազմի դէպքերէն ո՛չ նուազ կը զբաղի այն խնդրով թէ ամեն օր մեռնող հազարաւոր զօրականք մինչեւ ո՛ր աստիճան «պատրաստուած են յաւիտենական կենաց»: Խըրիմէ Կորտոն դնաց Հայաստան: Շատ հետաքրքրեցաւ այս երկրի զանազան հանդամանաց: Իւր պաշտօնէն (սահմանաց ուղղութիւն) կորցած ժամերը կը յատկացնէր երկրին բնակչաց, մանաւանդ թափառաշրջիկ ցեղերուն և այլ մասնաւորութեանց ուսումնասիրութեան: Արաբատ լեռան վրայ ելաւ, բայց մինչեւ դադարէր շիրացաւ ելնել: Աւելի յաջող եղաւ Արագած լեռան վրայ, որոյ մինչեւ դադարէր կրցաւ ելնել քուրդ-ուղեցոյցի մը առաջնորդութեամբ: Օսմանեան Հայաստանէն անցաւ ռուսական Հայաստան: Շատ հեգնական և զուարճալի նկարագրութիւն մ'ըրած է Կաւկասիոյ «իշխանաց և իշխանուհեաց»: »

1860ին Զինաստան դնաց, անդլօ-ֆրանսական բանակին հետ, և այս առթիւ արկածներու ճաշակն ստացաւ: Նրեք տարի յետոյ, կը ստանձնէր հրամանատարութիւնն այն բանակի զոր Զինաստանի եւրոպական

զալթականութիւնը կազմեր էին՝ դէմ դնելու համար Թայֆլինկներու սարսափելի ապստամբութեան ծաւալման: Տասն երկու տարիներէ ի վեր կը տեւէր այս յեղափոխութիւն: Հունկ անուն չինացի վարժապետ մը Մարգարէի մը դերն ստանձնած էր, և իւր մոլեռանդ համախոհներով քանիցս յաղթութիւններ տարած էր Բեքինի Կայսրութեան բանակաց վրայ: Հունկ այնչափ յաւաջ տարած էր գործն, որ ապստամբութեան շարունակութիւնը թողով իւր տեղակալաց ձեռք, ինք քաջուած էր Նանքին, ուր չինացի զեղուհիներու հետ զուարճութեամբ ժամանակ կ'անցունէր: Բայց մեծ մարդու մը պէս մեռաւ: Նրա տեսաւ որ իւր ոյժեր ցիր ու ցան կը լինէին և իւր յաջողութեան օրերը վերջ գտած էին, մտածեց թէ 13 տարի Մարգարէ և Վեհապետ լինելու երազը կը բաւէր փոխարինելու մարդու մը ամբողջ կեանքը: Գերի չիյնալու կամ նորէն վարժապետութիւն ընել չպարտաւորուելու համար, կախել տուաւ իւր Զինուհիներն և ապա ինքնասպան եղաւ: Հունկ ապստամբապետին գործը ձախող դնաց երբ եւրոպացի հրամանատարք ելան իրեն դէմ: Իւր տեղակալք, յաղթութենէ ի յաղթութիւն ընթանալով, Շանկայ քաղաքին մօտեցած էին, ուր հաստատուալ կան եւրոպացի վաճառական զալթականութիւնք: Սոքա իրենց ծախիւք բանակ մը պատրաստեցին, ում պահ մը ամերիկացի սպայներ և ի վերջոյ Կորտոն հրամայեց: Բայց եթէ սպայք եւրոպացի էին, զինուորք վարձեալ Զինացիներ էին: Ասոնց մէջ կարգապահութիւն չի կար: Կորտոն սարսափ ազդեց իւր Զինացւոյ: Ամենէն անդադաններն իւր ձեռք զուրս հանելով կարգերէն հրացանի բռնել կուտար: Այսպիսի խտուրթեամբ մը, և 5,000է աւելի մարդ չունենալով հանդերձ, 16 ամսոյ մէջ ջախջախեց ապստամբութիւն մը, որոյ դէմ չէին զօրած Կայսրութեան մը բոլոր ոյժերն: Այս ձեռնարկութեան առթիւ է որ Զինացի Կորտոն կը կոչուի սովորաբար: Բեքինի կառավարութիւնը Մանտալինի տիտղոս և 10,000 անդլիական ոսկի պարգեւ տուաւ Կորտոնի: Սա բոլորն ալ բաժնեց իւր զինակիցներուն կամ բարեգործութեանց: «Մի՛ կարծէք թէ ես չուայլ «բնութիւն մ'ունիմ, կը գրէր իւր մօր:

«բայց բնաւ կարեւորութիւն չեմ տար աչ-
«խարհային յաջողութեան: Գիտեմ որ Զի-
«նաստանէն պիտի մեկնիմ այնչափ աղքատ
«որչափ երբ առաջին անգամ ոտք կոխեցի
«աստ. բայց այն մտածում թէ 30 կամ 100
«հազար մարդկային կեանքեր ազատեցան
«իմ տկար միջնորդութեամբս, կը բաւէ ինձ
«կատարեալ գոհացում մը տալու:»

Կորտոն միշտ արհամարհանօք կը նայէր
գիւղերակաւ աստիճաններու մէջ բարձրա-
նալու խորհրդին, որով ընդհանրապէս կը
վարին ամեն զօրականք, և ասպետութեն կը
վարուէր պատերազմական նախարարութեան
հետ: Բայց փառքերն ու յաջողութիւնք կու-
գան այնպիսեաց որք բնաւ հետամուտ չեն
անոնց:

1865էն ց1871, Կորտոն ապրեցաւ ի Կը-
րազէնա, Թայնզ գետին եզերքն ամրացը-
նելու, հիւանդներ խնամելու և մեռնողնե-
րուն հոգին «պատրաստելու» զբաղեալ:
1871ին Կալաց զրկուեցաւ իբրեւ անդամ
Դանուբի յանձնաժողովոյն: Այս առթիւ նո-
րէն Թուրքիա եկաւ, և Թուրքիայէն գնաց
Սուտան, (առաջին անգամ,) իբրեւ յաջորդ
Սամուէլ Պէյըր զօրավարին, գերեվաճառը
ջնջելու պաշտօնով: Կորտոն շուտով հասկը-
ցաւ թէ, խիստ խմայիլ փաշա զայս դժ-
ուարին գործ տալով իրեն, ուղած էր պար-
զապէս փայտայել և խաբել Եւրոպիոյ, մա-
նաւանդ Անգլիոյ այն մարդասէրներն որք
գերեաց տուրեւառին ջնջումը կը պահան-
ջեն միշտ, քաղաքակրթութեան մեծագոյն
յաղթանակը նկատելով զայն: Բայց Կոր-
տոն համոզուած էր թէ իւր միջոցաւ «Աստ-
ուած ինք եղած է ընդհանուր կառավարիչ
Սուտանի:» «Ըրի ինչ որ ձեռքէս եկաւ, —
«կը գրէ իւր ընտանեաց, դժուարութիւն-
«ներէ պաշարուած վիճակի մը մէջ, — և կը
«խորհիմ թէ Աստուած Ինչ է ընդհանուր կա-
«ռավարիչ: . . . Մեծ նահանգ մ'ունիմ կա-
«ռավարելու. բայց ինձ համար օրհնութիւն
«մ'է տեսնել թէ Աստուած ինք ստանձնած
«է Սուտանի վերին կառավարութիւնն և
«թէ Նորա գործն է այս, և ո'չ իմ: Եթէ
«չյաջողիմ, իւր կամքն է. եթէ յաջողիմ,
«իւր գործն է: Ուրախ եմ որ կարող կը
«լինիմ կարեւորութիւն չընծայել այս աչ-
«խարհի պատուոյ, և ամեն բանէ վեր կա-
«ցուցանել իմ միութիւնս ընդ Նիսս: Թո'զ

«ես ստորնանամ, փաշայ հաւասար լինիմ,
«որպէս զի Նա կարենայ փառաւորուիլ:
«Այնպատութեանս մեծութիւնը կ'ընկճէ զիս,
«և մաղթել կուտայ որ դար ժամանակն,
«ուր Նա մի կողմ թողուր զիս, և այլ ոմն
«գրկէր աստ շարունակել իւր գործ:»

Կորտոն գերութեան սաստիկ թշնամի
նկատուած է: Գուցէ երբեմն այնպէս էր,
բայց ո'չ այժմ: Իւր ընտանեկան նամակաց
մէջ որոշապէս կը յայտնէ իւր կարծիք: Ինչ
որ ամեն բանէ աւելի կը վրդովէր զինք,
Ափրիկէի ներսերն ի գործ դրուած գերեաց
որսն էր, ճարտարութիւն: Գերեաց վաճա-
ռականներ կ'երթային Ափրիկէի ներսերն,
ուր ունէին գործակալներ, որք ազատ այ-
րեր, կիներ և տղայներ կ'որսային խմբովն,
յարձակմամբ կ'առնէին, կը գերէին, և կը
յանձնէին վաճառականաց որ զանոնք յետին
տառապանաց ու գրկանաց մէջ կը բերէին,
ընդ քարշ ածելով, մերկ, բոպիկ, անօթի,
կիսամուր վիճակի մէջ, մինչեւ Սուտան և
Եգիպտոս, ուր շահաւոր գներով կը վա-
ճառէին: Բայց Քոնկոյի երկրէն, հարաւա-
յին Ափրիկէէն մինչեւ հիւսիսային Ափրիկէ
բերուած այս ողորմելի արարածներէ 100ին
90ը ճամբան կը մեռնէին, և անթաղ մնա-
լով, այնպիսեաց ոսկերոտիք կը տարածէին
բոլոր այն ճամբուն վրայ ընդ որ անցած էին
կարաւանք գերեվաճառաց: Ողջ մնացողնե-
րուն երեսը նայիլ սոսկում կը սրտաճառէր,
մանաւանդ Եւրոպացւոյ մը: Նիհար, արժ-
գոյն, ամեն զգայութիւն կորուսած թըշ-
ուառներ, որոց միտքն այնչափ փթացած էր
որ ուրախութիւն անկարող էին զգալ երբ
ազատութիւն իսկ տրուէր իրենց: Ահա այս
տեսարան յուզեց զԿորտոն, որ գնուած և
Սուտանի կամ Եգիպտոսի բնակչաց վաճառ-
ուած գերիները նոյն վիճակի մէջ պահելով
հանդերձ, հետամուտ եղաւ նոր գերեաց
ներմուծումն արդիւնէ: Ուստի, Սուտանի
հնգամեայ կուսակալութեան մէջ իւր զըլ-
խաւոր գործ եղաւ հալածել ո'չ թէ գերի
պահողներն, այլ գերեաց վաճառականներն:
Ոսկեճամուկ համադրեալ մը հազած և ուղ-
տի մը վրայ հեծած, զոր սաստիկ կը վազ-
ցնէր այնպէս որ իւր հետեւորդը ժամե-
րով և օրերով ետեւ կը մնային, կ'արշաւէր
անապատներու մէջ ուղասիւծ ուղասիւս, գե-
րեվաճառներու քանակեաղերը կոխելով և

խուզարկելով . զի մարդկային մարմնոյ շահաւոր տուրեւառն անարգել ի գործ դնել կարենալու համար , նոքա ճշմարիտ բանակի մը կազմակերպութիւնն ստացած էին : Ունէին զինուորներ , զէնքեր , և մինչեւ իսկ թնդանօթներով ամրացեալ բերդեր և բանակետներ , զորս քանդել չէին զօրեր խափին զօրքերը : Զէպէհր փաշա Ռաֆաւան էր այս գերեզմանաց : (Նոյն մարդն է այս , զոր այս անգամ Կորտոն զօրավարը կ'ուզէ Սուտանի կուսակալ տեսնել , զգալով թէ նա տակաւին մեծ ազդեցութիւն կը վայելէ Սուտանի մէջ , թէեւ անդ լիական կառավարութիւնը չի հաւանիր :)

Բայց հակառակ մեծ զայրոյթին զոր կը գգար հալածելով և հարուածելով գերեաց որսորդներն ու վաճառականները , ամեն ինչ ներեալ չէր համարեր իրեն : Այնչափ կը հաւատար Նախախնամութեան ուղղակի և անդաւար գործողութեան , որ կը վարանէր բացարձակապէս դատապարտել գարերէ ի վեր տեւող իրաց վիճակ մը : Ինչ որ տեղի կ'ունենար , հարկաւ քրտառ էր : «Մեծ ճառ կատարեան (Ֆաթալիթ) մ'եղայ»⁽¹⁾ կը գրէ Սուտանէն : «Զեմ կրնար սակայն մոռնալ «թէ Աստուած թոյլ կուտայ գերեաց տուր և և աւին , և թէ Նա ինքն է ընդհանուր «կառավարիչ» : «Ինչ կ'ուզէ որ ընենք , կը գրէ Լոնտոնի Գեթեֆաճառի Չէլման Բնկերութեան եռանդուն անդամոց : «Ամենքն «ալ հրացանի՞ բռնենք : Միթէ անոնք ալ «(գերեզմանք) մարդ չեն : Իրաւունքներ «չունին : Միթէ նկատողութեան չոռ «նունք այս իրաւունքներ : Լաւ հասկցէք «միտքս : Եթէ գործիս գայ , պիտի գնեմ «գերիներն իմ բանակիս գործածման յատ «կացնելու համար : Պիտի ընեմ ինչ որ հա «ճոյ թուի ինձ , և ինչ որ Աստուած , յո «ղորմածութեան իւրում , հրամայէ ինձ : «ընտանեցեալ գերեաց մասին : Իսկ գեր «եաց որսն անպատճառ պիտի կտնցը «նեմ , մինչեւ իսկ եթէ հարկ լինի զո «հել կեանքս» . . . «Եթէ հայր մը և «մայր մը վաճառեն իրենց զաւակը , թէ՛ ի «րենց և թէ՛ զաւակին յօժար կամօք , չեմ «հասկնար թէ ի՞նչ առարկութիւն կրնանք «ընել : Բայց գերութիւնն անէծք մ'է երկ-

«րին , այնու զի կ'անմարդացնէ երկիրն , և «զի հազարաւորք կը կորնչին ճամբուն վրայ» :

Խնդիրը միայն գերիներն ազատել չէր : Ինչ ընելու էր ազատելէն յետոյ : Ազատ թողուլ բաւ չէր . զի գերեաց որսորդք շուտով կրնային նորէն որսալ այս անպաշտպան էակներ : Հարուային Ափրիկէ իրենց հայրենիքը զրկել անհնար էր . զի ճամբան ստուգապէս պիտի կորնչէին : Արձակել զանոնք անապատներու մէջ , անօթութենէ մեռնելու դատապարտել էր : Ուստի , դարձեալ գերեաց շահուն համար , Կորտոն բաժնեց զանոնք իւր զօրաց և երկրին բնակչաց , առանց հոգ ընելու թէ Եւրոպա ի՞նչ կը մտածէր քրիստոնեայ կուսակալի մը վրայ , որ ասոր ու անոր գերիներ բաժնելու դադեալ էր :

Մինչեւ 1880 տարւոյ սկիզբը մնաց Սուտան : Այս հինգ տարւոյ մէջ սոսկալի հարուածներ տուաւ գերեաց տուրեւառին : Իւր տեղակալք պահ մը շարունակեցին իւր գործ : Բայց շատ չանցած ամեն ինչ ինկաւ նախկին վիճակին մէջ , և ոչինչ մնաց Կորտոնի բարենորոգումներէն :

Կորտոն յայնժամ Լոնտոն վերադարձաւ , այլ եւս արկածներու ետեւէ չվազելու առաջադրութեամբ : Բայց տեսէ՛ք թէ ինչպէս գործադրեց իւր այս խորհուրդ :

1880 մայիսին կ'երթար Հնդկաստան : Յունիս 10ին , Հնդկաստանէն նորէն Զինաստան կ'երթար : 1881ին Լոնտոնի փողոցներէն կ'անցնէր Պրուսէլ երթալու համար , ուր կ'ուզէր խորհրդակցիլ Պեճիոյ թագաւորին հետ՝ ի Գոնկոյ արշաւանք մ'ընելու ծրագրին վրայ զոր յղացած էր ժամանակէ մը հետէ : Նոյն տարւոյ մայիսին , կ'երթար Հնդկային Ովկէանոսին մէջ Մոսիս կղզին , (անգլիական գաղթականութիւն) , ուր ամբողջին զօրաց սպայի պաշտօն կը վարէր : Հոն աշխատեցաւ ճշգրտելու Գրախտին տեղն , որով 10 ամիս հանդարտ կրցաւ կենալ : 1882 մայիսին Բարեյուսոյ Հրուանդանի գաղթականութիւնն ուղեց զինք , և հոն գնաց պահ մը : Եւ ահա 1883 յունուարին կ'երեւէր յԵրուսաղէմ , Անգլիայէն անցնելով : Սուրբ Տեղեաց մէջ այնչափ եռանդեամբ աշխատեցաւ Աստուածաշնչոյ հին վայրերը նոր վայրերուն հետ բաղդատելու և ճշգրտելու գործին , որ նորէն 10 ա-

(1) Ճակատագրի հաւատացող :

միս կանգ առաւ իւր արկածալից աստա-
րէզի մէջ : Պաղեստինէն նորէն Պրուսէլ գը-
նաց՝ Բոնկոյ երթալու խորհուրդն իրակա-
նացնելու համար : Լէոբոլտ Թադաւորին հետ
այս անգամ իւր կարգադրութիւնը լմնցու-
ցած և ճամբու պատրաստութիւնը տեսած
էր : Բայց նոյն միջոցին Սուտ Մարգարէն
մեծ յառաջդիմութիւններ ըրած էր Սու-
տանի մէջ : Մէհտին կը յուզէր բոլոր Անգ-
լիան : 1884 յունուար 7ին, Պ. Կլատտոնի
նախարարութեան միաբն եկաւ Թէ Սու-
տանի մէջ կարեւոր պաշտօն մը կատարելու
համար Անգլիա Կորտոն զօրավարին պէս
մարդ մ'ունէր : Կորտոն նոյն օրը Լոնտոն կը
կանչուէր, հրահանգներ կը ստանար, ճամ-
բայ կ'եղնէր գուցէ չվերադառնալու երկիւ-
ղիւ, և յունուար 19ին Գահիրէէն չոգե-
կառք կը նստէր դէպ ի Սարդուս : Անկէ ան-
դին ամենքս ալ գիտենք Թէ Ինչպիսի սըր-
տայոյզ արկածներ անցուց և դեռ կ'ան-
ցունէ :

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԱՌ ՄՈՆԱԿԱՆ

Լոյս գիշերաց լուռ ժամերուն
Երբ դաշնակէս ձայնդ երկնային,
Մենութեանս իմ գուստն թռչուն,
Դու չգիտես Թէ դամ զհետ քոյին .
Դու չգիտես Թէ իմ լըտելօք
Առկախեալ քո անուշ ձայնէդ,
Դաշնակութեանդ ընթանչելօք
Կ'արբենամ ի պուրակս յաւէտ .
Դու չգիտես Թէ իմ շունչս անգամ
Շուրթերուս վրայ չի՛շխեր ելնել,
Անձայն՝ հազիւ կոխել կրնամ
Տերեւն իսկ զօր խիթամ ճմլել .
Եւ Թէ ուրիշ պըւտ մ'ոյր քնար
Քննէ նըւաղ ունի գաղտնիք,
Յանկայ՝ կրկնէ հոգեպարար
Գիշերային քոյդ դայլայիկ .
Իսկ գիշերաց աստղն ի լուր քեզ՝
Լերանց ի կողս երբ խոնարհի,
Երեսդ ոստէ ոստ կը ծածկես
Ճաճանչէն՝ որ հոն կը ծըփի .
Եւ երբ աղբիւրն մղէ յառաջ
Փոքրիկ խիճն որ զինք կ'արգելուր,
Ու մնալին տակ հանէ կարկաչ,

Քո ձայն խռովեալ կը կենայ լուռ :

Ա՛հ, սրտառուչ ու վսեմ քո ձայն
Այնքա՛ն սուրբ է որ չէ յաստեաց,
Քո ոգելար նուագդ է բնազդն այն
Որ առ Որ Ի՛նչ գնայ վերասաց .

Քո ճառողիւնք և քո հծծիւն
Ինչ ներդաշնակ մէկ խառնուած
Ինութեան անո՛ւշ միմեծնքներուն,
Երկնից անհո՛ւն հառաչանաց :

Գուցէ չգիտես Թէ ձայն քոյին
Կապուտագեղ երկնի ձայնն է,
Ծառոյն, հնչուն քարանձաւին,
Չորին՝ որ ընդ ստուերաւ ննջէ :

Քո վանդիւններ կը ժողվես դու
Վըտակներու խոխոջներէն,
Խարշափներէն տերեւներու,
Արձագանգաց նուաղ միմեծնքէն :

Ջուրէն՝ որ մերկ ժայռէն թորէ,
Աւաղանին մէջ շիթ առ շիթ,
Որոյ կամարն հնչեցունէ,
Խորշոմելով զիւր ծոց վըճիտ .

Սօսիւններէն այն հեշտագին
Որ կ'արձակուին գիշերն յոստոց,
Ալեաց ձայնէն՝ որք կը նուաղին
Աւաղին մէջ, յեղէգանց ծոց .

Յայս հեշտ վանդից՝ ոյց միացած է
Քեզ ներշնչող բնազդն երկնային,
Ո՛ր փելումէլ, Աստուած կ'հիւսէ
Ձայնդ և կ'երգես ի գիշերին :

Ա՛հ, գիշերոյն սյդ քաղցրութիւնք,
Այդ սո՛ւրբք խորհուրդ քերեկոյին
Եւ բաժակներն հակող ծաղկունք՝
Նման բուրուառի մէկ բաժակին,

Այդ թերթեր՝ ուր արցունք թրթռան,
Այդ զովագին շունչ պուրակաց,
Ո՛վ դու բնութիւն, ունին այնքա՛ն
Հմայք՝ որ իրենց ձայն չէր պակասծ .

Եւ այդ ձայնն ալ խորհրդագած՝
Ում կ'ականջն հրեշտակք և ես,
Այդ հառաչանք սո՛ւրբ գիշերաց,
Քաղցրադաշնակ թռչնիկ, դո՛ւ ես :

Ո՛հ, միացո՛ւր քո ձայնդ իմ ձայնին,
Ջի՛ս ալ քե՛զ ալ լըսողն է նոյն,
Այլ օդասաց աղօթքդ՝ յերկին
Վաղ կը հասնին, սպասուած են հոն .

Արձագանգն է դա ա՛յն բնութեան
Որ սէ՛ր է միայն ու սրբութիւն,
Այդ միմեծնք հուր ու երկնաձայն,
Ամբան գիշերց երգդ այդ թրթռուն .

Եւ մեր վանդիւնն անսխալի՝
Որ կը հծծէ սրտահառաչ,
Արցունքներով միշտ կը սարսուի
Կամ կը հնչէ ողբոց աւաչ :

(ԼԱՄԱՐԹԻՆ)

Թարգմանութիւն
ՏԻԳՐԱՆ ՍԵԹԵԱՆ

ԱՅՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ Ի ԿՏՈՒՅ ԱՆԱՊԱՏ

Կտուց Անաստատ, 18 սեպտ. 1884.

Մի բանի օրերէ հետէ Կտուց եմ: Ս. Խաչի չաբաթն է, երկու օր կիրակի պէտք է մի դբաղում գտնել: Վանայ միօրինակութենէն զգացած ձանձրութիւնը փարատելու համար, այս չաբթու շատեր գնացին Աղթամար, ուրիշներ Վարազ, ոմանք Լիմ անաստատ, իսկ աւելի շատեր քաղաքի մօտակայ Ս. Խաչի վանքը, յորս ամեն տարի այս չաբթու բազմաթիւ ուխտաւորներ կ'երթան: Բայց մենք, որ ո'չ միայն Վանայ միօրինակութենէն, այլ ժխորէն ձանձրացած էինք, դիմեցինք Կտուց անաստատ, ուր մեզմէ ի դատ ուրիշ ուխտաւորներ չըկան այսօր, և պէտք է խոստովանիլ որ գէշ ընտրութիւն մ'ըրինք: Ոչ թէ ձանձրութիւն փարատելու, այլ իրապէս ձանձրանալու համար պէտք է դալ այս տեղ:

Ոչ միայն տեղւոյ, այլ ժամանակի ալ գէշ ընտրութիւն մ'ըրինք: Աշունը մտածէնք արդէն. այս օրերը ծովը յաճախ արեկոծեալ կը լինի, ինչպէս է երէկ և այսօր: Մենք պէտք էր երէկ դուրս ելնէինք, բայց կարող չ'եղանք արեկոծութեան պատճառաւ: Այսօր նորէն արեկոծեալ է ծովը, չգիտեմ թէ պիտի կարենա՞նք դուրս ելնել թէ ոչ: Կղզին թէեւ ցամաքէն 150-200 մեդր հեռաւորութիւն ունի, բայց և այնպէս թեթեւ հով մը եղած ժամանակն անգամ այս տեղւոյ նաւակը համարձակէր ծովու վրայ ելնել: Ոչ միայն նաւակը խիստ փոքր է և դիւրաւ թեթեւ հովէ մը չըջելով իւր պարունակած 10-12 ուղեւորները ծովու մէջը թափելու ամեն յատկութիւնը ունի, այլ նաեւ կղզին ցամաքէն բաժնող փոքր նեղուցին պատճառաւ այս տեղի արեկոծութիւնը սաստիկ կը լինի: Ասոնցմէ ի դատ կղզիէն բիշ մը հեռու ծովը յորձանք մ'ունի: Սաստիկ արեկոծութեան ժամանակ հովը կարող է նաւակը բռնելով յորձանքի մէջը ձգել, յորմէ աղատիւն շատ դժուարին և մերթ եւս բացարձակապէս անհնարին: Արդէն կըղզեցիք կը պատմեն մեզ քանի մը ծովային արկածներ, որք եղերական վախճան ունեցած են: Նոցա պատմութիւնները լսելով բնական է որ չվստահինք փայտի կտորի մը,

որ կարող է մեզ առաջնորդել այնպիսի տեղ մը, ուր երթալ չենք ուզեր: Նրբ վանքի նաւակը արեկոծութեան բռնուի, կղզեցի միաբանք խմբովին ծովուն եզերքը կ'ելնեն ամբողջութեամբ և եկեղեցւոյ բանալիովն հարուածելու ջուրը, որպէս զի ալիքները հանդարտին: Բայց դժբաղդաբար ալիքները շատ անգամ չեն հնազանդիր ո'չ կղզեցւոյ աղօթից և ո'չ բանալիներու բռնու հարուածոց:

Բոլորովին տարբեր միջոցներով մը, տարբեր երկրի մը մէջ կարծեցինք զմեզ. երբ տասը վայրկեան յաջող նաւարկութենէ մը յետոյ ոտքերնիս դրինք Կտուցի ցամաքին վրայ, սիրալիր հիւրընկալութիւն մը վայելելով անհամար մօղակներէ: Ամեն բան տարբեր է այս տեղ: Տարբեր բնակութեան տեղիք, տարբեր մարդիկ, տարբեր սովորութիւնք, տարբեր նոյն իսկ օդն և մինչեւ իսկ լոյսն:

Ուղեւորելով Կտուց, մենք կ'երեւակայէինք Վարազի կամ ուրիշ վանուց նման ընդարձակ պարսպաւոր վանք մը, լայն դաւախիթներով, ընդարձակ երեսաքններով և ծովահայեաց, օդաւէտ սենեակներով բայց այժմ իմացանք թէ ո'րչափ խաբուեր ենք: Նրբ հասանք կղզին՝ մեր առաջին դործն եղաւ մի սենեակ վերցնել, ուր պիտի գիշերէինք, մեր դոյքերը զետեղելով անդ: Վանքի հիւրընկալն առաջնորդեց մեզ մօթ և նեղ լաբիրինթոսի մը մէջ: Անգղայաբար կը հետեւէինք մեր առաջնորդին, միշտ սրբունեղութեամբ սպասելով թէ ե'րբ լոյս աշխարհը պիտի ելնենք: Բայց լաբիրինթոսը երթալով աւելի խաւարչտին կը դառնար, խոնաւ, խեղդիչ օդ մը կը նեղէր մեզ. մէկ նրբանցքէ ուրիշ նրբանցք մը, անկիւնէ ուրիշ անկիւն մը անդադար կը դառնայինք. երբ հիւրընկալ առաջնորդը խաւարի մէջը անտեսանելի դրան մը վրայ դարձուց բանալին, բացաւ դուռը, խաւարչտին խուցի մը մէջ մտնելով չուան մը քաշեց, նեղ ծակ մը բացուեցաւ տանիքի վրայ և տոգոյն լոյս մը թափանցեց խուցին մէջ, և մեզ ներս հրամցուց ըսելով. « Ահա ձեզ չգիտեմ ո'ր վանահօր սենեակն »: Հիւրընկալը մեզ չէր խաբեր. գետնի վրայ տարածուած գորգէ փուռները ցոյց կուտային որ այդ խուցին մէջ ժամանակաւ յիշաւ պաշտօնական անձ մը բնակած է, որպիսի է վանահայրը: Բայց

մենք որ միշտ ծովահայեաց, օգուստ սենեակներու երեւակայութեան ներքեւ էինք, չատ մութ դտանք զայն, և բարձր, ծովահայեաց սենեակ մը ուղեցինք: Հիւրընկալը զարմանալով որ մենք չենք հաւնիր խուցի մը, որ ժամանակաւ վանահօր բնակութեան տեղի եղած է, փակեց դռուք և սկսեց նորէն առաջնորդել մեզ: Դարձեալ նոյն լաբիւրինթոսն, դարձեալ նոյն մութ, նեղ նրբանցքները: Ուրիշ քանի մը խուցեր ալ ցոյց տուաւ մեզ, որք առաջինէն ոչինչ տարբերութիւն չ'ունէին, միշտ կրկնելով նոցա նախորդ տէրերու անունը, բայց մենք և ոչ մէկին չհաւանեցանք: Ուրիշ դռու մը բացուեցաւ մեր առաջ: Մտանք խուց մը և ապա ուրիշ խուց մը: Հիւրընկալը դարձեալ մի և նոյն գործողութիւնը կատարեց տանիքին վրայ ծակ մը բանալով: Այս խուցը ունէր ծովու վրայ բացուող երկրորդ դռու մը և դա էր միւս խուցերէն ունեցած տարբերութիւնը: Հասկեցանք որ խաբուած էինք, հասկեցանք որ այստեղ սենեակներ չկան, այլ միայն խուցեր և ակամայ մեր գոյքերը զետեղեցինք անդ: Հարիւրէն աւելի խուցեր կան Կոուցի մէջ, որոնց ամենն ալ մեր տեսած խաւարտէին լաբիւրինթոսին վրայ կը բացուին և ամենն ալ տանիքի փոքրիկ ծակէ մը կ'ընդունին տոգոյն լոյս մը և վատառող խոնավ օդ մը՝ անտանելի դարչահոտութեան մը հետ ընկերացած: Կը տեսնէք որ իրաւունք ունէի վերը ըսելու որ այս տեղի օդն և լոյսն անգամ տարբեր են: Այս տեղ միայն կարող եղանք դադարաւ կազմել թէ ի՛նչ է վանքի մը խուցը...

Նրեւակայեցէք որ մարդիկ կը բնակին այս մարդկային որջերու մէջ, մարդիկ՝ որ ունին կմախային կերպարան մը, արտասովոր ապրութիւն մը և դիւանագեալ զգացումներ: Սոքա են վանքի միաբաններն — վարդապետներ և մոնթեր: Նոցա բոլոր զգեստներն շինուած են կարծր բրդեղէնէ: Բուրդէ շապիկ մը, բուրդէ բաճկոն մը, և բուրդէ երկայն վերարկու մը կը կազմեն նոցա աղանելիքը: Օրուան կէսը եկեղեցւոյ մէջ անցունել՝ աղօթելու մեր մեղաց թողութեան համար, և ապա փակուիլ խաւարաշին և վատառող խուցի մը մէջ, կամ մաւ զրկելով զիրենք Աստուծոյ շնորհած օդէն և լոյսէն. ահա այս մարդոց ամբողջ

զբաղումը: Նրեւակայեցէք մարդիկ, որոնք 20-30 տարիներով կզլէն դուրս ոտք չեն դրած և որոց տեսութիւնը փոքրիկ կըղզւոյ մը, կամ լաւ եւս ստուերամած խուցի մը սահմաններէն անդին չտարածիր, մարդիկ զուրկ անկախ կամքէ, զուրկ ինքնուրոյն դատելու և խորհելու կարողութենէ: Վանքը դարձուցած է զանոնք ապուշ, ապիկար էակներ, անզգայ դիակներ: Վանքը ֆիզիկապէս և մտաւորապէս մեղուցած է զանոնք: Խեղճ մարդիկ:

Թէ այս մարդիկ, որք անշուշտ վանքը մտած ժամանակ ունէին դատելու կարողութիւն, ի՛նչպէս կարող եղած են ընտելանալ վանական այս սպանիչ կեանքին, այնչափ զարմանալի չէ, երբ ասեմ որ այս տեղ բնակող անձինք, կարելի է ասել առանց բացառութեան կը կազմեն այն տեսակ մարդոց դասակարգը, որք իրենց թոյլութեամբն և անընդունակութեամբն անկարող լինելով սեպհական ասպարէզ մը և ինքնուրոյն գործունէութեան ոգի ունենալ, նախընտրած են անփորձ փակուիլ մութ խուցի մը մէջ, բան մը՝ որ անշուշտ շատ աւելի դիւրին է, քան մաճ կամ բրիչ բռնել ձեռքը և ճակտին քրտինջովն ապրիլ և ապրեցնել ուրիշները: Ուրեմն հասկանալի է որ վանքը ապաստանարան եղած է այն մարդոց, որք ոչ թէ իրենց հոգիները փրկելու կամ ազդին ծառայելու համար ապաստանած են անդ, այլ սարդապէս դասալիք լինելով կեանքի կռիւէն: Սոքա երբ վանքը մոտն, չունէին հանճար, բայց ունէին դատելու բնական կարողութիւն մը, եւ տկար և անկախ ոգի մը, զոր ունի ամեն հասարակ մահկանացուն: Վանքը զայն ալ խեց, վանքը կատարելապէս մեղուց զանոնք: Մարդկութեան համար և իրեւ բանական մարդկեանք ունենալէ դադրած են նոքա:

Կերակուրները, կ'ասեն, մեծ ազդեցութիւն ունին մարդկային բնութեան վրայ: Արդ, այս տեղ երկիւղ չ'ունինք որ մսի օգտակար ներգործութեան ներքեւ գըտնուին այս վանականք, զի արդէն երբեք միս չեն ուտեր աստ և մսակերութիւնն խտրու արդիւնւած է: Ոչ միայն միաբանք, այլ այստեղ եկող ուխտաւորք անգամ սարտաւոր են չ'ուտել միս: Հետեւաբար կըղզեցիք սա՛նք օրերը կը անանին մի միայն բան

ջարներով, իսկ ուտիք օրերն նոցա կերա-
կուրն է քանի մը տարիներէ ի վեր հինցած
անախորժ պանիր մը, (այս տեղ պանիրը
քանի մը տարի հինցուցնելէ յետոյ կ'ուտեն,
որպէս զի անախորժ համին պատճառաւ մի-
աբանք չատ ուտել չկարողանան) և մա-
ծուն, իսկ շաքաթ և կիրակի օրերը եղով
չինուած ֆալ մը: Այսպէս ամեն ինչ միացած
են վանքին մէջ Ֆիզիզապէս և մոտաւորա-
պէս փճացնելու համար 40 ի չափ անձինք,
որոց կոչումը անշուշտ չատ տարբեր էր
անօդ և անլոյս խուցի մը մէջ փակուելէն,
առանց մարդկութեան համար ոչինչ նշանա-
կութիւն ունենալու:

Թէեւ երեք օր է միայն որ այս տեղ ենք,
բայց մեզի ալ կ'ուզեն մոնթ դարձնել: Երբ
եկեղեցին սկսի, անդադար կուգան մեր
դուռը կը զարնեն, մանաւանդ գիշերը և
կ'ստիպեն մեզ եկեղեցի երթալու: Առաջին
գիշերը վեր ելնելով ուզեցինք եկեղեցի եր-
թալ, բայց դժբաղդաբար առաջնորդ չու-
նենալով լաբիրինթոսի նեղ նրբանցքներուն
մէջ կորսուեցանք և մօտ կէս ժամ մէկ նըր-
բանցքէն ուրիշ մը, անկիւնէ մը ուրիշ անկիւն
անդադար դառնալով հազիւ դիպուածով
հասանք եկեղեցին, որ նոյնպէս սոյն մեթ-
լաբիրինթոսին մէջ չինուած է: Միւս գի-
շերները կրկին առաջին դժբաղդութեան չի
պատահելու համար, փակեցինք մեր սենեկի
դռըը առանց ունիլն դնելու նորա վրայ
տեղացած հարուածոյ:

Այս ժամուն արեւոմտեցիւնը դադարած
լինելով նաւակով դուրս պիտի ելնենք կող-
զիէն: Քաղաքը հասնելէ յետոյ կը շարունա-
կեմ դրել վանքի ուրիշ այլ և այլ հան-
դամանաց մասին: Դուրս կ'եկնենք կղզիէն,
ուր թէեւ զուարճանալու համար եկած է-
ինք, բայց աւելի տխրեցանք: Այս տեղ մեք
ըստ կարի ուսումնասիրեցինք վանքը և վա-
նական կեանքը, զորս տեսնող ուղեւոր մը
սկիսմայ հետեւեալ հարցումը կ'ընէ. «Շայ
ապրը ի՞նչ կ'օգտի այս տեսակ վանքէ մը»:
Ուրիշ անգամ եթէ զուարճանալու համար
քաղաքէն դուրս ելնել ուզենք, անշուշտ
այս տեղ չպիտի գանք այլ եւս:

ՇԱՀԻՆ

Վ Է Պ

ՄԱՏԼԷՆԻ ՄԵՂՔԸ

Ե.

(Շարունակութիւն Տեւ Թի- 5757)

—Մի՛ վախեր, ես եմ ըստու ցեխոտ վերար-
կուն վրայէն նետելով և ոտիցս առջեւ վառա-
րանին մարմարեայ կրակարանին վրայ ծունր
դնելով, ահաւասիկ քու քովդ եմ, Մա'տէն,
դարձեալ դքեզ դոսայ, այսուհետեւ ոչինչ
կարող է զմեզ բաժնել աշխարհիս վրայ:

—Րո'պէր, ի՞նչպէս կրցիր հոս ըլլալ:
Ո՛վ ըստ քեզի որ դաս: Հօրեղբայրս...
Տխրութեամբ գլուխը ցնցեց:

—Դժբաղդութիւն մը պատահեցաւ, ըսի
բոլորովին գունաթափեալ ոտք ելնելով արդ-
եօք Լուիզ...

Ձայնը շրթանցս վրայ մարեցաւ:

—Հանդարտէ, ապահով եղիր, հօրեղ-
բայրդ և իւր ազջիւլը ամենեւին վտանգի
մէջ չեն...: Ես մեկնեցայ՝ գալու դքեզ
դռնելու համար, Մա'տէն... Թողուցի այն
բնակարանը՝ երբէք հոն չվերադառնալու
համար՝ ուսկից որ դքեզ վաճառեցին...:

—Անկարելի է, կը խաբես զիս... պէտք
է որ դառնաս, Րոպէր, և անմիջապէս պէտք
է երթաս: Զիս բոլորովին կը կորսնցնես,
Աստուած իմ, ես հօրեղբօրս երդուընցած
եմ դքեզ բնաւ չտեսնել վերստին: Ո՛վ կրցաւ
քեզի ըսել...

—Ա՛հ, ի՞նչ տկար կերպով կը սիրես,
Մա'տէն. կուգամ ես քու լքեալ վիճակիդ
մէջ քեզի ընկերելու, և դու ինձ կը զուր-
ցես որ մեկնիմ քենէ:

—Սակայն ես երդուընցած եմ Րոպէր,
երդուընցած եմ ամենուն համար մեռած
ըլլալու... և ո՛ւր էր թէ այնպէս ըլլայի:
Հօրեղբայրս պիտի անիծէ զիս, եթէ գիտ-
նայ որ հոս ես, և Լուիզ...

—Հօրեղբայրդ ինքն իւր ձեռքովը խը-
զեց իւր ազջիւնը հետ զիս միացնող կա-
պերը, ըստ Րոպէր, խիստ կարուկ ծայնով
մը: Երբէք չպիտի տեսնեմ իւր երեսը:

—Ո՛հ Աստուած իմ, և Լուիզ...

— Լուիզ, ըստե՛ս, սակաւիկ մի դողալով, երկինք վկայ են ինձ որ այս ցաւը կ'ուզէի իրեն խնայել: Դու գիտես, իրեն համար կ'ուզէի խեղդել մեր սէրը, որովհետեւ մենք զիրար կը սիրէինք, Մատէն. բայց իւր հայրը զքեզ վռնտեց և ամօթալի կերպիւ վռնտեց, ու զիս, զիս ալ նախատեց . . . : Չեմ ուզեր նորէն ատելի կասկածանաց ենթարկել ինքզինքս: Հօրեղբայրդ իւր նախատանօքը զիս ազատ ըրաւ և ահա իմ ազատութիւնս քեզի կը բերեմ:

Ապա՛ծ իրեն մտիկ կ'ընէի:

— Ի՞նչպէս ալ գուշատ ես, խեղճ աղջիկ, չարունակեց քաղցր գորովանօք ինձ նայելով: Քիչ ատենուան մէջ որչափ տուրուեր ես, թո՛ղ որ լաւ մը գիտեմ զքեզ, սիրելի՛ս, վտիտ և նիհարցած փոքրիկ ձեռքերդ համբուրեմ: Այլ չպիտի թողունք զիրար, կը հասկնամ, Մատէն, ճակատագիրը, նախախնամութիւնը կամ թէ որ կ'ուզես, Աստուած ինքնին կը միացնէ զմեզ, հակառակ մարդկանց և նոյն իսկ մեզի դէմ՝ որ անմոռութեամբ կ'ուզէինք իրարմէ փախչիլ:

— Ա՛հ, Բոպէր, չխառնենք զԱստուած մեր տկար կրից մէջ, ինչե՛ր կը զրուցես անբաժան կերպով իրարու հետ կենակից ըլլալու վրայօք. չե՞ս գիտեր որ իմ սպարաւականութիւնս առանձին ապրիլ և տանջուիլ է, և քու տեղդ ալ հոս չէ, ամենեւին:

— Ի՛նչ, գոչեց սրամտեալ, երկուքնիս ալ նախատեալ և չճանչցուած, այսուհետեւ առանց ընտանիք մ'ունենալու՝ երբ ճակատագիրը կը յամառի զմեզ դէպի իրար միջև, այնքան յիմար պիտի ըլլանք իրարմէ փախչելու: Արդէն իսկ միթէ բաւական չմարբանք, բաւական չտանջուեցա՞նք . . . : Ա՛հ, Մատէն, թո՛ղ որ զքեզ սիրեմ . . . :

Նստաւ քովս, և իւր բռնուն սիրոյն արայայտութիւնները միացնելով իւր պատմութեանը հետ, պատմեց իմ մեկնելէս վերջը տեղի ունեցած կերպով մը թատերական անցքերը. թէ ինչպէս հօրեղբայրս իմ անմեկնելի աներեւութանալ մեկնելու համար՝ համոզեր էր զԼուիզ որ երկայն ժամանակէ ի վեր մտացական կարողութիւնս խանդարեալ, յանկարծ առաւօտուն անակնկալ ծանր հարուած մը ընդուներ էի և թէ այդ վիճակին մէջ իբր թէ ես չէի ուզած Բիւրիին հետ մեր օթեւանը դառնալ:

Առողջութեանս կրած ակներեւ փոփոխութիւնը, և վերջին ժամանակներ վրաս երեւցած տարօրինակ բնաւորութիւններ՝ ճշմարտութեան կերպարանք կուտային իմ վրաս յօրինուած այս կեղտկարծ կարծեաց: Խնացայ որ հօրեղբայրս լսելով ծառայից իւրարու մէջ անցած դարձած խօսակցութիւնները՝ զանոնք մասնաւորապէս հարցափորձեր էր, և Յուստիանէէն խնացեր էր որ ամուսնութենէն առաջ Բոպէրին հետ գաղտնի թղթակցութիւն մը ունեցեր էի: Անով համոզեալ որ այն ժամանակէն ի վեր զիրար կը սիրէինք՝ զԲոպէր ամբաստաներ էր իբր թէ երկուքնիս ալ իւր անարդ հաշիւներուն զոհած ըլլար: Իրօք ես աղքատ էի, և Լուիզ հարուստ էր: Փեսին հետ ունեցած մէկ տեսակցութեան միջոցին յորում իրմէ մեկնութիւն կը սահմանէր, իւր կասկածները չկրցաւ անոր ծածկել և այդ նախատինքը ըրաւ երեսին: Բոպէրի գոյնը դարձաւ այս մահացու անարդանաց առջեւ, բայց արհամարհող, առանց պատասխան տալու, սիգաքայլ ստնդուղներէն վար իջաւ, դաւթէն անցաւ և մեկնեցաւ օթեւանէն և ոչ իսկ ետո՛ն նայելով: Դրան սեմէն ոտքը դուրս դրած ժամանակ՝ տեսաւ Բիւրը և կանչելով զինքը՝ իմ փախստեանս վրայ հարցութորձ ըրաւ: Դիպուածական կերպով մը նա միտքը պահեր էր նոյն առտուն վարձած կառքիս թիւը, Բոպէր անկից օդուտ քաղելով՝ քանի մը ժամ փնտռեցն վերջը, կրցաւ հետքս գտնել: Քիչ մը խորհրդածելով, և մաս մ'ալ ներքին նախազգածութեամբ թերեւ՝ մնացորդը գուշակեց: Ինչ ճիշդ քսան ու չորս ժամ վերջը՝ Պրըթմանի ճանքան բռնած էր: Այն հասնելով՝ քիչ մը նեղութիւն քաշեց Բօլ Իվօնի ճիշդ ուր տեղ ըլլալը տեղեկանալու համար, և ոչ իսկ առաջնորդ մը կրցաւ գտնել: Բայց ամենայն հաստատամտութեամբ և վստահ իւր կիսավայրենի բնազդմանց վրայ, միմիայն, առանձին, խաւար գիշերով՝ նետուեցաւ ամայի դաշտաց խորափոր ճամբաներու լաբիւրինթոսին մէջ, թուփը և մացառք երբեմն իրեն արգելք կ'ըլլային, և երբեմն ապառաժ ժայռեր իրեն կը զարնուէին: Մինչեւ առաւօտ այսպէս մոլորեալ գեղերելու վտանգին մէջ էր և դաշտազետինը իրեն անել ուղի մը կ'ըսկոնէր երեւալ, երբ հեռուն նշմարեց ա-

դօտ լոյսը որ իմ պատուհանէս կը ցոլար : Այդ ուղղութեամբ դէպի յառաջ գալով քիչ ատենէն գտնուած բնակարանիս դէմը հասած էր : Թէեւ ոչինչ զինք կ'ապահովցնէր որ այդ խառնաշփոթ զանգուածը, որուն ձեւը գիշերուան մթութենէն չէր կրնար որոշել, Լա Բօշ Իփօնը ըլլայ, միտքը դրեր էր հոն հիւրընկալութիւն հայցել և սպասել մինչեւ յաջորդ առաւօտ : Այն միջոցին է որ փեղկին զարկեր էր, և ես պատուհանը բացեր էի և նա ձանձնալով զիս՝ որթատունկին բռնէն վեր պատատեալ ելնելով, վայրկենին քովս գտնուեր էր :

Այս երկայն պատմութենէն ետքը ինձ յայտնի եղաւ որ իմ գոթաղէ հօրեղբայրս իւր անխոհեմ բարկութեամբը, Լուիզին և իւր ամուսնոյն մէջ այնպիսի վիճ մը փորեր էր զոր այնուհետեւ ընտլը շատ դժուար պիտի ըլլար : Միւս կողմանէ Բոպէրին աղետալի սէրը այս պարագայիս մէջ՝ իւր հպարտութեանը մեղսակից կ'ըլլար :

— Պէտք է մեկնիս, կ'ըսէի իրեն, բայց նա գլուխը կը շարժէր յամառեալ կերպարանքով մը :

— Իմ կեանքս հոն է ուր դո՛ւ կ'ապրիս, կը պատասխանէր նա, պիտի մնամ ես : Եթէ զիս վճնտես, մօտակայ անտառը պիտի ապաստանիմ, խրճիթի մը մէջ, ուր որ ըլլայ : Քեզի հետ մի և նոյն օդը պիտի շնչեմ և հեռուանց պիտի տեսնեմ զքեզ, երբեմն քովէդ պիտի անցնիմ և պիտի ողջունեմ զքեզ՝ ինչպէս գիւղացիները որ զքեզ ձանբուն վրայ կը հանդիպին : Զլանա՞ս պիտի ինձ այս աղքատաց և անտարբերներուն զգացած ուրախութիւնը :

Պէտք էր մէրժէի զինքը, իւր խօսքերուն ականջ չդնէի, իմ բնակարանիս մուտքը արդիւլեւ էի իրեն, բայց կրից խնայող պատճառաբանութիւնները սիրոյ հրապուրանաց ներքեւ ընկճեալ կամաց տկարութեան հետ միացած կը դաւածանէին զիս կորսնցնելու : — Վերջապէս պիտի համոզեմ զինքը երթալու, կ'ըսէի ինքնիրենս, միայն քիչ մը ժամանակ պէտք է անցնի : Ես միայն կարող եմ իւր գոռողութիւնը իջեցնելու հրաշքը գործել : Այսպէս իմ սրտիս թեւալուծութեանց անսալով՝ զիջայ Բոպէրը վերընտրին տեսնելու : Շագանակի ծառատնկոյ մէջ իրեն զատուած տեղ մը ցուցուցի՝ ուր

կէս օրուան դէմ երթայի զինքը պիտի գտնէի : Արշալոյսը մօտեցեր էր լուսաւորելու հորիզոնը . բաժնուելու ժամանակ էր : Դեռ նուազ և անորոշ էր աղմուկն ու ժխոր որ անհուն տարածութեան մէջ գործունեայ կենաց վերադարձը կ'աւետէին : Կերկերեալ աքաղաղները մէկ ագարակէն միւսը մէկ մէկուձայն տալով կը խօսէին : Մնաս բարով ըսինք իրարու, քանի մը ժամէն զիրար տեսնելու ապահովութիւնը ունենալով, և Բոպէր թեթեւակի պատուհանէն ցատկելով՝ քիչ ատենէն աներեւոյթ եղաւ ժանտափուշ տնկոց և կաղնի ծառոց թաւուտ մնացաւի մը ետեւ :

2.

Շատ օրեր անցան յորում ամենայն ազատութեամբ մենք զիրար տեսանք : Աշնան տխուր կերպարանքը կարծես պարզուած էր և իւր տառուկ պայծառութեամբ՝ երկայն չընթացաւ իրենց կը հրաւիրէր զմեզ : Վարդագոյն մացառներով և ոսկեծաղիկ թուփերով զարդարուն բլրոց վրայ մագլցելու կ'աշխատէինք, երբեմն թուփի մը տակ կը նստէինք և կամ գալիահար յաղթ պուրակաց մէջ տեղ, որ մեր ոտից ներքեւ կը ճայթոնէին : Կը պատմէինք իրարու փոփոխակի մեր կրած տանջանքները, ներքին սպտերազմները, և կամ աւելի առաջ երթալով դէպի անցեալ՝ մեր առաջին երազները սրտակցաբար իրարու կը հաղորդէինք, և զիրար նմանօրինակ գտնելնուս վրայ կը զարմանայինք : Ժամերը արագ արագ կը թռչէին : Նրեկոյին յամրաքայլ կը վերագառնայինք և ի շնորհս խաւարաց պահուն՝ Բոպէր իմ բնակարանիս աւելի մօտ գալու կը համարձակէր և մինչեւ դռնէն ներս մտնելու՝ աչքը վրաս կ'ըլլար : Այն ժամանակն է որ կը հեռանար և մեկուսացած ագարակի մը մէջ՝ գիշերը անցնելու տեղ մը կը փնտռէր : Կս ալ կը փակուէի ինքնիրենս երազացնոր՝ յաջորդ օրուան սպասելով : Կըզգուշանայի աւելի հեռուն մտածելու . մեզի համար ապագայ չկար . ես գիտէի որ Բոպէր պէտք էր երթար և թերեւս պէտք էր փութացնել իւր երթը : Կ'առաջադրէի յաջորդ օրը զինքը յայդ համոզելու . բայց երբ զինքը վերստին տեսնելու ժամանակը կ'ու-

գար, իմ արիութիւնս զիս կը լքանէր: անեղ անձկութիւն մը խօսքը շրթանցս վրայ կը կասեցնէր, և բան մը չըրած՝ օրը կը տա-
րածամէր:

Բարիպէն ամենեւին լուր չ'ունէինք: Կար-
ծես թէ առանձին էինք աշխարհիս երեսը,
և երբեմն մինչեւ իսկ անցելոյն մէջ քաշած
տառապանքներս անգամ կարծես կը մոռ-
նայի, ինչպէս նաեւ սպառաշուն սպառնալիք-
ները՝ ներկային դիւթիչ հրապուրանաց մէջ
թէեւ կարծատեւ: Բոպէրի զգոյշ և պատ-
կառօտ վարմունքը զիս կ'ազդէր: Եւ խի-
թաւ կը հանդարտէր: Այսպէս նենգաւոր
թիւնալից բաժակէն կաթիլ կաթիլ խմելով
կ'արբենայի և այդ անուշ դիմութեան
մէջ որուն ոչ ոք անպատիժ կրնայ մասնա-
կից ըլլալ, հոգիս անդառնալի կերպիւ իւր
անքժութեանը հետ կը կորսնցնէր արիու-
թիւնը: Երկուստարգութեան կրակը, վա-
ղորդայնի անտուգութիւնը, առանձնու-
թեան և սիրոյ վնասակար խորհուրդները
ամեն բան վտանգը կ'աւելցնէր, և քանի
որ իմ յաղթութեանս վրայ կ'ուրախանայի՝
չէի տեսներ որ առաջուց յաղթուած եմ...

Պատիժը չ'ուշացաւ:

Եթէ գթութեան արժանի դժբաղդու-
թիւն մը կայ հպարտ հոգւոյ մը համար՝ իւր
անկման զգացումն է: Վսեմին փառասիրու-
թիւնը, մեծ անձնութեան մը հպար-
տութիւնը ունեցած ըլլալ, այնքան արհա-
մարհանք տածել պարզ և հասարակ բաղդի
տէր անձանց նկատմամբ, այնքան բարձրու-
թիւն ունենալ՝ ուրիշի տկարանայնէրը դա-
տելու համար և ինքնին արհամարհանաց ար-
ժանի ըլլալ, ինչ մեծ պատուհաս: Այնու-
հետեւ կենացս տանջանքը այդ եղաւ: Ա-
րեւը ինձ ատելի դարձաւ, վասն զի իմ ա-
մօթս ու նախատինքս հրապարակադոյժ
կ'ընէր: Ձէի համարձակեր պառաւ Մարի
Աննային երեսը նայիլ, այդ պարկեշտ կնոջ
կերպարանքը կը խռովէր զիս: Այն ժամա-
նակ զիտցայ որոնք են այս աշխարհիս ճշ-
մարիտ թշուառութիւնները, որոնց համար
կ'աւջնայ մարդ և չհամարձակիր խոստովա-
նիլ: Ճանչցայ որ չիկայ դառնագոյն վիճակ
քան յարգը կորսնցուցած լքեալ հոգւոյ մը
վիճակը որ կը դատէ ինքզինքը և ինքիրմէն
կը փախչի: Ինձ այնպէս կ'երեւար որ նոյն
ինքն Բոպէր պէտք էր զիս ատել, շատ ան-

գամ իրեն ալ կ'ըսէի զայդ, և բոլոր իմ վը-
րաս ունեցած սիրոյն և գորովանաց ջան-
քովը չէր յաջողեր զիս ապահովցնելու: Քո-
վէս հեռանալուն պէս՝ դառն յուսահատու-
թեան մէջ կ'ընայի. գրեթէ ինձ այնպէս մը
կուգար որ զինքը կ'ատէի: Կուզէի մեռած
ըլլալ, և մահը ինձ վախ կ'ազդէր: Արդեօք
ինչե՞ր չէի տար ունայնութեան և ոչնչի
կարենալ հաւատալու համար:

Քանի որ մտքուր էի՝ միտքս անյաղթելի
դրած էի ինքզինքս, արդեւ քնեմն նոյն իսկ՝
հպարտութիւնս կ'աւելցնէին և բարձրագը-
լուիս յանդգնութեամբ վտանգին կը դիմա-
դրաւէի: Կարծէի որ ուրիշի խրատուց պէտք
չունիմ ես և ոչ ալ ինքզինքէս զատ վախ-
նալու դատաւոր մը: Այդ չափազանց հը-
պարտութիւնը իմ անկմանս վրայ երկարա-
տեւ չեղաւ. միանգամ որ ինկայ, բան մը
չմնաց ինձ: Արագ արագ յիմար յանձնապա-
տանութեանէ մը՝ յուսահատ վհատութեան
մէջ ինկայ, և ինքնիրմէ անչարժ նիւթի մը
պէս խօլական երկիւղի և ցաւալի հակա-
սութեանց խաղալիկ եղած՝ սկսայ ծփալ:
Փորձեցի աչուքներս երկինք դարձնել, բայց
Աստուած մի միայն զիս դատապարտելու
համար կ'երեւար:

Մահացու տքնութեանց և անդոհական
երազոց մէջ կ'անցնէին դիչերներս, առաւօ-
տը կ'երնէի պաղ քրտինքով մը, հոգւով ու
մարմնով կոտորած, խղճիս ծանր բեռը նո-
րէն բառնալու համար: Հիւանդութիւնս նո-
րէն սկսաւ զօրանալ և հանդերձ բոլոր իմ
ճգամբս զայն ծածկելու՝ Բոպէր դարձեալ
վախցաւ: Ինքնիշխան կամքս կորուսեր էի.
է որ ամենայն սրտի տաքութեամբ կը փա-
րէի Բոպէրին. յաջորդ վայրկեանին բոլորովին
փոխուած էի. բարկացած ձեռով մը կ'ըն-
դունէի զինքը և կամ կը մերժէի և արտաս-
ուաց հեղեղ մը կ'իջեցնէի: Ձէի կրնար սե-
նեկիս մէջ առանձին մնալ՝ առանց սոսկում
մը զգալու: Ինձ այնպէս կ'երեւար որ աստ-
ուածային վրէժխնդրութիւնը հոն ինձ կ'ըս-
պասէր: Կեանքը անտանելի եղաւ ինձ և
Բոպէրին պաղատեցայ որ զիս առնու տա-
նի: — Հեռու հեռու երթանք, ըսի իրեն,
ծովը ահաւասիկ առջեւնիս է, դէպի հոն եր-
թանք. թերեւս իւր ընդարձակութեան և
միրկաց տեսարանին տոջեւ՝ խաղաղութիւնս
վերստին գտնեմ:

Նրկրորդ օրը ճանբայ ելանք . Մարի Ան-
նային մնաս բարով ըսած ժամանակս՝ ար-
տասուալից աչքերով զիս համբուրեց : — Ի-
րաւունք ունիս նորէն Բարիւ զառնալու ,
ըսաւ իւր շինական բրտութեամբը , օրիորդ ,
այս տեղին օդը ձեզի աղէկ չի գար , չէի
համարձակեր քեզի ըսել , բայց ասուհով եմ
որ ձիւներուն չալիտի հասնէիր՝ եթէ աւելի
երկայն առեն հոս մնայիր :

Մեկնեցայ իրմէ՝ առանց ըսելու թէ կը
խաբուէր , և առանց իմացնելու իրեն որ
դարձեալ Պրըթաներ պիտի մնայի : Ճանբան
Բոպէրն ու ես ձկնորսի խրճիթի մը մէջ ի-
ջեանեցանք , ուր բարի մարդ իկը յանձնա-
ռու եղան զմեզ հիւրընկալել : Առջի օրերը
ի շնորհս տեղեաց նորութեան և Բոպէրին
շարունակ ներկայութեան , մեծ մխիթա-
րութիւն և թեթեւութիւն մը զգացի : Բո-
պէր զրբեր և օրագիրներ և կապար գրիչ-
ներ բերել տուաւ . կ'ստիպէր զիս բանով
մը զբաղիլ , որպէս զի ինքզինքս մոռնամ :
Նրկար շրջագայութիւններ ըրինք , երբեմն
հետիոտն ծովեղերը աւազուտին կամ քարա-
ժայռերուն վրայ , երբեմն ձկնորսի նաւա-
կով մը ծովու վրայ : Մեր շրջագայութեանց
միոյն ժամանակ՝ ժայռերու մէջ ալիքներէն
խոռոչացեալ քարայր մը գտանք , ուր սո-
վորութիւն ըրինք գալ ամեն օր . երբեմն
ծովը կը բարձրանար , մինչդեռ մենք ամե-
նայն ծովութեամբ աւազին վրայ նստած՝
աչքովս կը հետազօտէինք շոյտ շոյտ ալ-
եաց յառաջխաղացութիւնը , որ լեռնակու-
տակ ահեղ գոչմամբ քարայրէն ներս խու-
ժեւով՝ աւազին վրայ կարկառեալ ոտքեր-
նիս կը լիւզէին :

Ժամերով բանտարդել կ'ըլլայինք , և ոչ
ինչ մեզի այնքան հաճոյ կը թուէր քան զայդ
փառարեալ քարաժայռը՝ ուր աշխարհէս
մեկուսացեալ մեր օրերը կ'անցունէինք : Զէի
կշտանար ծովը դիտելէն , այդ կենդանի ան-
հունութիւնը որ իւր յաւիտենական շառա-
չելովը՝ առանց խռովելու մեր վշտաց հա-
զորդ կ'ըլլար . մինչեւ Աստուծոյ բարձրա-
նալու անկարող իբրեւ միջնորդ օգնական
բնութեան կը դիմէի և անուշութիւն մը
կարծես կ'զգայի այդ զեղմանց մէջ : Օր մը
մոռցուած թղթապանակի մը մէջ գտայ ա-
նարուեստ բանաստեղծական գրութիւն մը՝
ցաւազին սրտիս մտերմական գեղում . հոս կը

դնեմ զայդ՝ որովհետեւ բաւական հաւա-
տարմաբար հոգւոյս վիճակը կը նկարագրէ .

Կ'իջնէ կոյր գիշեր , ծովեղերն է քուն ,
Նրկնք անընշլլ ոչ մէկ աստղ արթուն .
Յիմար կատաղի մըրկեալ հովեր՝
Ոլորեն մոզայս շարժուն է հոգեր .
Ի՛նքս քոց անգնդոց թոյրաթուիս կոհակ
Կ'իջնէ գայ մոլոր փշրիլ է խորակ .
Յանեզր հաւաչանք ձայնիւ հեծութեան
Կարծես թաւայեւ շղթայս գերութեան
Յասմանդ նըշաւակ ո՞ր դու ծով անգութ :
Ստրուկ բիւրաւոր է բանան աւազուտ
Դու ընդ քարշ ածես . ո՞ր կարէ դեմ կալ
Դեռնանան ալիքդ յաւէտ լեռնացեալ . . .
Ի խոր անձաւիս իբր ըզբո կոհակ .
Որ փորէ ըզփայլ ա՛հ դառն յիշատակ ,
Օրէ օր աճող դանդաղ ալեաց տակ՝
Իմ սիրտս թաղեց ի ցաւս անյատակ .
Քան ըզծովդ անգութ ալիս վրէժինդիբ՝
Երբէք չ'ամբիր , երբէք չ'ընկրկիր .
Հեղաշունչ հոգմով դու մերթ մեղմանաս՝
Այլ սիրտս անանդորը չ'ունի անտի մաս .
Թէ կարենայիր գէթ սրբել զիմ աղտ ,
Կ'ըսէի քեզ՝ ա՛ռ դու պիղծ իմ այս կեանք ,
Արթնցու՛ր զայրոյթդ յալիոդ անըրկուն ,
Կ'ուզեմ մահ գտնել և ազատութիւն :

Ընդ վայր ջանացի աւելի մեղմ խնայտ-
ներ ի գիր առնուել , ոչ զսէր և ոչ զերջան-
կութիւն դիտէի երգել , մի միայն իմ սնան-
ջանքս բացատրելու խօսքեր կը գտնէի : Քիչ
ատենէն անկարող եղայ նոյն իսկ այդ թե-
թեւ ճիգն ընելու . հիւանդութիւնս ահա-
ւոր սաստկութեամբ կ'արթննար : Տղու մը
տեսքը , նոյն իսկ խեղճուկ տնակը որ զմեզ
հիւրընկալեր էր՝ աչքէս արցունք կը քամէր .
ինձ համար կորսուած երջանկութիւնք՝ ո՛ր-
չափ ա՛տուչ կուգային : Մեր տանուտէրը
երեք տարեկան փոքրիկ աղջիկ մը ունէր
զոր երբեմն գաղտադողի կը սրագնէի , գըր-
կածութեանցս բուռն տաքութենէն սար-
սափած՝ կ'ընդլխմանար :

Երբեմն ալ կը պատահէր որ այս աստի-
ճան տանջուէլէս զրգուռած ճակատադրիս
անիրաւութեան դէմ կ'ապստամբէի : — Եթէ
երկինք զիս կը մերթեն , եթէ մարդիկ զիս
կ'անիծեն , մնացած օրերս դոնէ վայելեմ :
Նրիտասարդ եմ կը սիրեմ ու կը սիրուիմ ,
սիրոյ հաճոյքները գէթ մինչ իսպառ վայե-
լենք , միթէ այնքան սուղ չգնեցի՞ զադ ոնք :
Բայց սէրն ինքնին կարծես թէ զիս կը մատ-
նէր , չափազանց տանջուէր էի և շատ եր-
կայն ժամանակ , այնպէս որ սիրտս ցամքեր

էր և երջանիկ ըլլալու ալ կարողութիւն չուներ :

Այն ժամանակ Բոսլէրը կ'ամբաստանէի : — Ինչ որ երազեր էի՝ ան չէ եղեր սէրը կ'ըսէի : Առանց բարկանալու ինձ մտիկ կ'ընէր . այդ բուռն բնաւորութիւնը ինձ համար կերպարանաւորուեցաւ եղած էր , բայց նկատեցի որ երթալով տիրութիւնը կ'աւելնար և երբ տեսայ որ կը տանջուէր ինքզինքիս աստիճանաբար : — Մտիկ ըրէ , ըսի իրեն օր մը որ զինքը աւելի սրտաբեկ տեսայ , դարձեալ երթանք , աւելի հեռու երթանք : Կուզե՞ս դու զիս քու երկիրդ տանիլ , քու սիրած Ամերիկադ . անցելոյն և մեր մէջ դնենք զանսահման . հոն երջանիկ պիտի ըլլանք : Բաղկացը մէջ զիս սեղմելով — Իրաւունք ունիս , ըսաւ , Ֆրանսայի օդը մահաբեր է քեզի և քու հիւանդութեանդ ես ալ կը մեռնիմ . թռչինք ի հեռուն՝ առանձին , մեկուսացեալ յաշխարհէս . նոր կեանք մը պիտի սկսինք , ոչ ոք պիտի զխոնայ մեզի եղածը , մենք ալ պիտի մոռնանք . շատոնց է այս փափաքը ունէի , բայց չէի համարձակեր քեզի ըսելու :

Այնչափ երջանիկ կ'երեւար որ կարծես թէ հանդարտեցայ . անմիջապէս սկսանք երազներ երազելու և մտայածին երջանիկութեամբ կանխաւ զնայելու : Բոսլէր Հայքը նամակ զրկեց ուր երբեմն թղթակիցներ ունէր մօտալուտ երթեւեկութեանց վրայ տեղեկութիւն ստանալու համար :

ԲՕԼ ԱԼՊԱՆ
(Երբեմնակէ)

ՔԱՂՈՒԱԾ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ

29 ՍԵՊՏ. — 5 ՀՈԿՏ.

ԱՐՏԱՔԻՆ

Նուպար փաշա , իբրեւ նախարարապետ Եգիպտոսի , արժեւորեցաւ գլխավճարը դադարեցուցած ինկելով , Ընդհանուր Պարտուց եւրոպական յանձնաժողովոյն կողմէ դատ բացուած է Ն . Վսեմութեան , իւր պաշտօնակցաց և այն կառավարչաց դէմ որք յատկացեալ հասոյթները փոխանակ արժեթղթոց սնտուկին յանձնելու , սկսած են զըր-

կել Գահիրէի ելմտական պաշտօնատունն : Այս դատ եւրոպական կարեւորութիւն ըստացած է : Յանձնաժողովոյն փաստը սա է թէ դադարեալ գլխավճարն եւրոպական Տէրութեանց մասնակցութեամբ շինուած օրէնքի մը մէկ մասը կազմելուն պատճառաւ , Եգիպտական նախարարութիւնն ինքն իրեն չէր կրնար դադարեցնել զայն : Աւելցան զրոյ պաշտօնական ակմբոց մէջ՝ կը կարծուի թէ այս դատ վեց ամիսէն առաջ չալտի վերջանայ : Նուպար փաշայի նախարարութիւնը դատին յետաձգումը պիտի պահանջէ : Եթէ դատարանը չհաւանին , Նուպար փաշա փաստաբան չալտի կարգէ , և թող պիտի տայ որ ի բացակայութեան դատավճիռ արտասանուի : Յետոյ այս դատավճիռ ոչ ոք պիտի բողբէ : Եթէ դատավճիռը հաստատուի , վերաքննութիւն պիտի սկսահանջէ :

— Սուրանէն առնուած լրոց համեմատ , Կորտոն զօրավարին օգնական Սդուարդ զնդապետն սպաննուած է : Քիչընը հաղարապետը կը հեռագրէ թէ Սդուարդ զնդապետն , յետ ումբակոծելոյ զՊերպեր , մի քանի շողենաւներ ետ զրկեց ի Խարդում , և ինք 40 մարդ երով դէպ յառաջ խաղաց : Շոգենաւը խրեցաւ ժայրի մը վրայ : Պէտէվի Շէյխ մը ներկայացաւ յայնժամ և Սդուարդ զնդապետին և ընկերաց առաջարկեց զիրենք Մէրավի տանիլ ուղտերով : Սդուարդ զնդապետն ընդունեց այս առաջարկ . բայց մինչ ճամբան կերթային , Շէյխն իւր մարդերով յարձակեցաւ անգլիացի զնդապետին վրայ , զոր սրէ անցուց , ինչպէս նաև նորս 40 ընկերները : Քիչընը հաղարապետը կը յարէ թէ ինք մասնաւոր պատճառներ ունի հաւատ ընծայելու այս պատմութեան , զոր թէեւ Սուրանէան , բայց արժանահաւատ ազրիւրէ ստացած է : Կր կարծուի թէ Փըրանսացի հիւպատոս Պ . Հէրպէն և գերմանացի հիւպատոս Պ . Հէնկալ , որք Կորտոն զօրավարի քով կը գտնուէին , և պիտի ընկերանային Սդուարդ զնդապետին , սպաննուած են քաջ սպային հետ :

— Տօնիօլայի կառավարիչն , արար լրաբերի մը տեղեկութեան համեմատ , կը ծանուցանէ հօկտ . 3 թուով թէ , Կորտոն զօրավարը Պերպեր եկեր է չորս շողենաւներով , ումբակոծեր է քաղաքն , ի վախճանս

դարձուցեր է ապստամբներն, և վերադարձեր է զՊերպեր : — Նոյն թուականին Խըտիվն հեռագիր մը ստացաւ, ծանուցանող թէ Պերպեր ետ առնուած է ապստամբաց ձեռքէն, որք սակայն յաջողած են փախցընել իրենց գանձն (յորում կային նաեւ Կորտոն զօրավարին ոսկիները) : Կորտոն զօրավարն անձամբ կատարեր է զայս դործողութիւն, ուրակոծելով զՊերպեր, և յետոյ պատժելով մերձակայ ուրիշ ցեղերու ժողովուրդներն, որք յարած էին Սուտ մարդարէին : Կորտոն զօրավարին այսպէս Պերպերի վրայ երթալ կարենալն եւս ցոյց կուտայ թէ Խարդում ո՛չ եւս սլաշարեալ է :

— Հոկտ. 9ին թաթառ իջաւ Քաթանէի վրայ (յիտալիա) . 100 մարդ իկ սպաննուեցան և 358 հոգի վիրաւորեցան :

— Թիէն - Չիէնի դաշնադրին վրայ Լէ՛ւրանի՛թի մէջ հրատարակեալ քննադատական բուռն յողուածոց պատճառաւ, նոյն դաշնագիրն ստորագրող Ֆուրիէ հրամանատարն հոկտ. 10ին մենամարտեցաւ Լէ՛ւրանի՛թի խմբագրապետ Պ. Նէնրի Բօլֆօրի հետ : Երկու հակառակորդներն ալ թեթեւապէս վիրաւորեցան :

— Ռուսիոյ Ծովային Նախարարութիւնը 4,200,000 ռուսլիի վարկ մը կը խնդրէ նոր մարտանաւուց շինութեան համար : — Բուլնիոյ կառավարիչ Կուրքօ զօրավարին կողմէ Պետական Խորհրդոյ ի նիստ հրաւիրման նըստաւան է քննութիւն այն բարենորոգմանց զորս կուզուի մուծանել ի Բուլնիա : Բոլնիերէն լեզուն նորէն պիտի դործածուի հանրային դպրոցներու մէջ : — Կուրքօ զօրավարը Կայսրութեան Ծերակոյտի անդամ անուանեցաւ, Վարչաւիոյ ընդհանուր կառավարչութիւնը պահելով հանդերձ :

— Լանտոնի կառավարութիւնը շաբաթը 150,000 ոսկի, կամ 3,700,000 ֆրանք կը վճարէ Ուոլըվի զօրավարին դէպ ի Սուտան Նեղոսի և ցամաքի ճամբով ըրած արշաւանքին համար :

— Միացեալ Նահանգաց մէջ հանրապետականաց յուզումը կը շարունակէ, նախագահական ընտրութեան առթիւ : Թայմիլի թղթակիցը կը հաշուէ թէ Իւրաքանչիւր կուսակցութիւն սոյն սլահուս դործի վրայ ունի 200է աւելի ստեղծարարներ :

Ն Ե Ր Ք Ի Ն

Յունաց պատրիարքական ընտրողական Ժողովն այս երկուշաբթի ի նիստ գումարուելով, ընտրութեան ձեռնարկեց և պատրիարք ընտրուեցաւ Տէրքոնի մետրապոլիան : Տ. Յովակիմ Դ. այսօր պատիւ կուենայ Օդոսս . Սուլթանին ներկայանալու :

Պատրիարքական տեղապահ Տ. Ագաթան գեղոս Սրբազան առջի օրը դատական նախարար Վսեմ. Հասան Ֆէհմի փաշայի երթալով յանձնեց առ Օդոսս . Սուլթանն մատուցանելի շնորհակալեաց ուղերձն որ ստորագրեալ է ընտրողական Ժողովոյ կողմէ :

— Կառավարական որոշմամբ, Թուրքիոյ բոլոր պաշտօնատանց և վարչութեանց սընտուկներն այսուհետեւ քննութեան պիտի ենթարկին, ի Կ. Պոլիս տարին չորս անգամ և ի գաւառս տարին երկու անգամ, բայց անորոշ ժամանակաց մէջ :

— Արքունի Փողերանոցը մէկ միլիոն զըրուշի արծաթ մէծիտիյէ մանր դրամի վերածելով, Օսմանեան կայսերական Պանքային զրկած է :

— Տանիմարբայի Քրիսթիան Թագաւորին երկրորդ որդին Վլատմար իշխանն դեկտեմբեր ամսոյ մէջ Պոլիս պիտի գայ :

— Մայրաքաղաքս հասած հեռագրերէ կիմացուի թէ Կեսարիոյ թղթատարը կողոպտող աւազակաց մեծ մասն Ապաղա դաղթականներ են, եւ անոնց երեքն Հասան օղլու Մէմիէր, թալաուաղըիկ Ռէշիտ և ուրիշ մը բռնուած բանտարկուած են : Հարցաքննութեան յայտնուել է թէ աւազակք 28 հոգի են, և աւարի առնուած 280,000 զրուշն իրենց մէջ հաւատարապէս բաժնուած լինելով, 300 ական մէծիտիյէ բաժին ինկած է . յիշեալ երեքն գետնի տակ թաղած են եղեր իրենց բաժիններն, ուստի երեւան հանուեր են 31,920 զըի մէծիտիյէ, 33,000 զըի գանազան ոսկի, 1,165 զըի հինգնոց, վեցնոց, գեղեցիկ անպարանջան մը, և Գրիգոր փորագրեալ կնիք մը : Մնացեալ աչազակք եւս ամեն կողմէ սլաշարեալ են :

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ազգային վարչութեան խառն ժողովոյ չորեքշաբթի առաւր նստին մէջ խօսք բացուելով Ամեն . Ս. Պատրիարք Հօր հիւանդագին վիճակին վրայ , առաջարկուեալ է առժամեայ տեղապահ մը կարգել , և այս պատճառաւ որոշուեալ է պատգամաւորութեան մը միջոցաւ Նորին Սրբազնութեան կարծիքն առնուլ :

— Գեր . Տ. Մկրտիչ Ս. Արքեպիսկոպոս Բաբամեանց , կաթողիկոսական տեղապահն Ս . Էջմիածնի , հեռագիր մ' ուղղելով առ Գեր . Տ. Խորէն Ս. Արքեպիսկոպոս Նար-պէյ , Ատենապետ Կրօնական Ժողովոյ , տեղեկութիւն խնդրեալ է Ամեն . Ս. Պատրիարք Հօր առողջական վիճակին վրայ : Ատենապետ Սրբազանն հեռագրաւ պատասխանեալ է թէ Ն . Բարձրութիւն ապաքինելու վրայ է , չընորհիւն Աստուծոյ և յուրախութիւն Ազգիս :

— Երևոյական պաշտօնատուներ Բ . Դրան հետ կը բանակցի՝ Պոլսոյ և արուարձանաց ազգայիններէն Երուսաղիմայ պարտուց համար հանգանակելի նպաստի բաշխման քանակութեան և միանգամայն հաւաքման եղանակին վրայ , և յոյս կայ թէ դոհացուցիչ կարգադրութիւն մը լինի ի մօտոյ :

— Գեր . Տ. Արիտաակէս եպիսկոպոս Էտիրնէի առաջնորդութենէ հրաժարելով մայրաքաղաքս վերադառնալէն յետոյ , տեղւոյն Ազգային վարչութիւնն Արժ . Տ. Մկրտիչ քահանայն առաջնորդական տեղապահ ընտրեալ , և ի Պատրիարքարան տեղեկագրելով՝ վաւերացումը խնդրեալ է :

Յայտնի է , թէ Կիսրոսի ազգայինը եւս այսպէս քահանայ մը կարգեցին յառաջնորդական տեղապահութիւն , երբ առաջնորդն հրաժարելով մեկնեցաւ . և արդ նոքա ալ իրենց ընտրութեան վաւերացումը կը խնդրեն կեդրոնական վարչութենէն , ձեւական պարզ արարողութիւն մը կատարած լինելու համար , վասն զի գրած են թէ տեղւոյն անդիական կառավարութիւնն արդէն ի պաշտօնէ ընդունած ու վաւերացուցած է իրենց կատարած ընտրութիւնը :

— Թոտոսթոյի Գաղաքական Ժողովը չընորհակալութեան գիր գրեալ է առ ազգային կեդրոնական վարչութիւնն , վիճակին Ա-

ռաջնորդ Գեր . Տ. Ներսէս սրբազանի հրաժարականը չընդունուելուն համար :

— Կրօնական Ժողովոյ որոշմամբ այս երկուշաբթի հեռագրեցաւ առ Գեր . Առաջնորդն եւ առ Կրօնական Ժողովն Նիկոմիդիոյ , որ քահանայացուաց ձեռնադրութիւնը կատարել չտան եւ սպասեն հրահանգաց Պատրիարքարանի :

— Երզնկայի Առաջնորդ Գեր . Տ. Հմայեակ եպիսկոպոս՝ մի քանի օր յառաջ հասաւ Պոլիս :

— Վանէն սեպտ. 18 ամսաթիւ նամակէ մը ցաւալի տեղեկութիւններ կստանանք : Երկու հայ երիտասարդք , պարոնայք Խաչիկ Շէրէնց և Յովհաննէս Գաղանձեան ձերբակալուելով բանտը կը մնան : Սոյն ձերբակալութեան սկզբնապատճառն է Պ . Յովհաննէս Գաղանձեան , եւ կը կարծուի թէ նորանոր ձերբակալութիւնը եւս տեղի պիտի ունենան : Պ . Յովհաննէս Գաղանձեան , երբեմն Անդղ դիւղի ուսուցիչ , խիստ հարցաքննութեանց ենթարկուած է : Պայրամի տօնէն առաջ երեք օր շարունակ հարցաքննութիւններ կատարուեալ են , օրը 4-5 ժամ : Հարցաքննութիւնը տեղի կուենան ի ներկայութեան կուսակալին , ընդհանուր դատախազին և վերաքննութեան պատժական ատենի նախագահին : Ընդհանուր դատախազն եւ ոստիկանութեան հրամանատարըն , հանդերձ ոստիկանօք , վերաքննութեան պատժական ատենի նախագահին հետ կերթան Գաղանձեանի տունն եւ խուզարկութիւններ կընեն , սակայն ո՛չ այլ ինչ կը գտնեն բաց եթէ մի քանի ծրար թուղթեր՝ զոր վերջնելով միասին կը տանին : Սոյն գրութիւններն մասամբ թարգմանուած են և հետզհետէ կը թարգմանուին :

Ասոնց մէջ կը գտնուին խեղ մը ոտանաւորներ , 1878 - 79 ինչ դուռած : Ինչպէս յայտնի է , մեր մէջ շատերն տղայական գրութիւններ իբր գլուխ դործոց գրելով կը սահալանեն : Այդ տեսակ գրութիւններ մեր մէջ ծաղրելի դարձած են , սակայն նոքա որք տեղեակ չեն խեղ մը ուսանողներու և ուսուցանողներու այսօրինակ ոճին՝ կրնան տարբեր մեկնութիւններ տալ ամէն կարգի անկարեւոր գրութեանց : Ցաւալի կէտն այն է , որ այդ օրինակ տխրաբանութեանց պատճառաւ գուցէ պատահին անախորժ դէպ-

քեր եւ զանազան անձինք ձերբակալուին : Հաւանօրէն Պ. Գաղանձեան իւր ոտանաւորներուն թարգմանութեանց առթիւ հրատարակային հարցաքննութեան ենթարկուի :

Ձերբակալութեան շարժանիքն եղած է հրացանի մը դէպքը : Սեպտ. 8ին չորս եւրիտասարդ քաղաքացիք Վանայ մօտակայ Ս. Գրիգորի վանքէն Վան վերադառնալու միջոցին երբ կը հասնին Սըզլայ գիւղը , տեղւոյն Աշարի գրագիրն այդ երիտասարդներէն միոյն վրայ , որ էր Պ. Յովհաննէս Գաղանձեան , Պէրֆումի հրացան մը տեսնելով կը ձերբակալէ , և հրացանն ու տէրը ուղղակի քաղաք կը տանի :

Երբ հարցաքննութիւնը կը լինին Գաղանձեանի թէ ի՞նչպէս եղած է որ ռուսական հրացան մը իւր մօտ կը գտնուի , նա չփութելով կամ առ ահի տարրեր կերպով կը խօսի քան ինչ որ էր իրականութիւնը : Սակայն յետոյ կստուգուի թէ այդ հրացանը ինքն գնած է երբեմն Պ. Գէորգ Շէրէնցէ որ այժմ Ռուսաստան կը գտնուի : Այս պատճառաւ կը ձերբակալուի նաեւ Պ. Խաչիկ Շէրէնց , եղբայր Պ. Գէորգ Շէրէնցի :

Պէտք է գիտնալ թէ Տիգրիսի հիւպատոսարանին կողմանէ ի Վան հասած տեղեկութեանց համեմատ , հարկ տեսնուած է խիստ զգուշութիւններ ընել սահմանադրուող ամեն կողմն , որպէս զի մաքսանենգութիւնք տեղի չունենան :

Արդէն երեք վանեցի ուղեւորներ՝ որք Տիգրիսէն ի Վան եկած ժամանակ ապահովութեան համար մէյմէկ հրացան միտսին կը կրէին , ձերբակալուելով Պայաղիտ զրկուած են , և ըստ ոմանց ի Կարին :

— Կրօնական ժողովն երկուշաբթիի նշատին մէջ յանձնախումբ մը կազմեց՝ Պոլսոյ քահանայից ժողովրդոց ծխացոյցները քննել եւ կարգադրելու համար : Ներեց Աթիկ - փաշայի Տ. Ռէթէոս քահանայի , ըստ զըզման նորա եւ ըստ միջնորդութեան քարոզչին . եւ՝ որոշեց՝ որ եկեղեցական զրեանց ապագութենէ առ 100 առնուելիք զուամարն իրրեւ հասոյթ յատկանայ ա՛յն զրամարկեղ , որ պիտի հաստատուի՝ ծերութեան ու հիւանդութեան պատճառաւ եկեղեցական պաշտօն վարելու անկարող եկեղեցականաց նիւթական օգնութեան ու մխիթամութեան համար :

— Ազգային ժողովոյ առաջիկայ նիստն որ այս ուրբաթ տեղի պիտի ունենար , յաջորդ ուրբաթ աւուր յետաձգուած է , ըստ որում յոյժ հաւանական է որ նոյն օրը Վարչութիւնը պիտի կարենայ Ազգային ժողովոյ ներկայացնել Երուսաղիմայ պարտուց խնդրոյն ծրագիրը :

— Ալաթիոյ առ ժամանակեայ Թաղահան Խորհրդոյ պաշտօն վարող Յանձնաժողովն արդէն իւր գիւտնը կազմած է և ամենայն գործունէութեամբ ձեռն ի գործ արկած է :

Գիւտնն հետեւեալ կերպով կազմուած է : Ատենապետ . — Յարութիւն էֆէնտի Նորատունկեան .

Ատենադպիր . — Միհրան էֆէնտի Չօպանեան .

Գանձապետ . — Տիգրան էֆէնտի Բարաղամեան :

Մնացեալ միւս երկու անդամներն են , Անտոն էֆէնտի Հաճեան , Խաչիկ էֆէնտի Կամսարական :

Սոյն Յանձնաժողովն կազմող Տեարց ձեռնհասութիւնն արդէն քաջածանօթ լինելով , ներելի է յուսալ որ այսպիսի կարեւոր թաղի մը ամեն գործերն վաղընդ փոյթ կարգադրելով , ազգին մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի լինին :

— Սեպտ. 20 թուով հետեւեալ հեռագիրն ստացուած է Ատանայէ :

« Այս պահուս Հաճընէն սուրհանդակով նամակ մը ստացայ Նարկիդէ , որ կը ծանուցանէ թէ , Աբեւէլի , Թէքէճեանի և Մանգուշի մէջ հրատարակուելու համար իրեն բռնի ստորագրել տրուած է գիր մը , որով իրեն յայտարարել կը արուի թէ գլխուն եւ կած փորձանքը սուտ է : Դատական Քննիչն եւս տակաւին այս մտօք յայտարարութիւններ ձեռք բերելու կը զբաղի : Նարկիդ կը յարէ թէ , իւր կեանք վտանգի մէջ լինելով , կը պարտաւորի ահաւայ ստորագրել իրեն բերուած թուղթերն , և իւր հօրեղբօրէն , որ իւր փոխանորդն է , կը խնդրէ միջոցներ ձեռք առնուլ իւր կենաց ապահովութեան համար :

« Կաղաչեմ , ի սէր Վեհապետին , եւ յանուն արդարութեան , որ մեր չարաքաստիկ դուստրը ժամ առաջ Ատանա բերել տրուի :

ԳՐԳԵԱՇՈՐԵԱՆ

Արտօնատէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻԼ ԼՐԱԳՐՈՅ